ԽՍՀՄ ՊԵՏՊԼԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

# Հ Ր Ա Հ Ա Ն Գ

## ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 1936 Թ. ՁԵՎԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ. Ս. Խ. Հ. ԺՈՂՏՆՏԵՍՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Վ Ա Ն 1 9 3 6 Թ Վ.

29 JAN 2018

ԽՍՀՄ ՊԵՏՊԼԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

# Հ Ր Ա Հ Ա Ն Գ

## ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 1936 Թ. ՁԵՎԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ. Ս. Խ. Հ. ԺՈՂՏՆՏՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1 9 3 6 Թ Ի Վ.

ՀԱՄԱՐ
II-28059գր

Կիրովականի տպարան

Գլավլիտ № 2070   Տիրաժ 1200   Պատվեր № 224

# ՎՈՐՈՇՈՒՄ

## ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

### *ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՅԵՎ ՇՐՋԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐՃԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Նպատակ ունենալով պայքարել ավելորդ հաշվետվությունների դեմ, վորոնք գրասենյակային աշխատանքով ծանրաբեռնում են գյուղխորհուրդները և շրջանային գործադիր կոմիտեները, ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են՝*

*1. Հաստատել բոլոր դաշնակից հանրապետությունների գյուղխորհուրդների և շրջանային գործադիր կոմիտեների համար պարբերական հաշվետվությունների ցանկը։*

*Գյուղխորհուրդների և շրջանային գործադիր կոմիտեների հաշվետվությունների յուրաքանչյուր ձեվ պետք ե հաստատված ու ստորագրված լինի անձամբ՝ ԽՍՀՄ Պետպլանի Ժողովրդական Տնտեսության Հաշվառման Կենտրոնական Վարչության (ՑՈՒՆԽՈՒ) պետ ընկ. ՈՍԻՆՍԿՈՒ կողմից։ Առանց ՑՈՒՆԽՈՒ պետի ստորագրության՝ հաշվետվության բլանկներն անվավեր են։*

*2. 1933 թ. հոկտեմբերի 1-ից վերացնել գյուղխորհուրդների և շրջանային գործադիր կոմիտեների այն բոլոր պարբերական հաշվետվությունները, վորոնք չեն նախատեսնված այս վորոշումով։*

*3. Սահմանել, վոր հետագայում գյուղխորհուրդների և շրջանային գործադիր կոմիտեների համար այս վորոշումով նախատեսնված պարբերական հաշվետվությունների ցանկը, ինչպես և հաշվետվությունները ներկայացնելու ժամկետներն ու կարգը, կարող են փոփոխության յենթարկվել յուրաքանչյուր առանձին դեպքում, ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի թույլտվությամբ։*

4. Միանվագ վիճակագրական հաշվետվությունները կրճատելու նպատակով սահմանել, վոր գյուղխորհրդներից ու շրջանային գործադիր կոմիտեներից միանվագ վիճակագրական տեղեկություններ պահանջելու իրավունք ունեն միայն դաշնակից ու ինքնավար հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների Խորհրդները և մարզային ու յերկրային գործկոմների նախագահները, այն էլ միայն այն դեպքում, յերբ միանվագ վիճակագրական տեղեկությունների պահանջը բղխում է միութենական կառավարության համապատասխան վորոշումներից և յերբ պահանջված տեղեկությունները չեն նախատեսված այս վորոշումով սահմանված պարբերական հաշվետվությունների մեջ։

Արգելել 1933 թ. հոկտեմբերի 1-ից մնացած բոլոր հիմնարկություններին ու անձանց պահանջել գյուղխորհուրդներից և շրջանային գործադիր կոմիտեներից վորևէ միանվագ վիճակագրական հաշվետվություն։

5. Արգելել գյուղխորհրդների և շրջանային գործկոմների նախագահներին 1934 թ. հոկտեմբերի 1-ից սկսած ներկայացնել պարբերական և վոչ պարբերական (միանվագ) վիճակագրական հաշվետվություններ, այնպիսի ձևերով ու ժամկետներով, վորոնք մատնանշված չեն այս վորոշման մեջ։

Պարտավորեցնել դատախազության որգաններին պատասխանատվության յենթարկել այն անձանց, վորոնք պահանջում են հաշվետվություն ներկայացնել այնպիսի ձևերով և ժամկետներով, վորոնք նախատեսված չեն այս վորոշումով։

6. Առաջարկել ԽՍՀՄ Պետպլանի Ժողովրդական Տնտեսության Հաշվառման Կենտրոնական Վարչությանը՝ գյուղխորհուրդների, շրջգործկոմների նաև գերատեսչությունների ներկայացուցիչների անպայման մասնակցությամբ, մինչև 33 թվի հոկտեմբերի 1-ը, գյուղխորհուրդների համար մշակել նախնական հաշվետվության առավելագույն չափով պարզեցրած ձևեր՝ հարմարեցնելով այդպիսիները սահմանված հաշվետվության հետ և ներկայացնել ԽՍՀՄ Ժողկոմխորհին ի հաստատություն։

7. Պարտավորեցնել ԽՍՀՄ Պետպլանի Ժողտնտհաշվառման Կենտրոնական Վարչությանը և համապատասխան ժողկոմատներին, այս վորոշումով սահմանված վիճակագրական ձևերի օրինակները մի ամսից վոչ ուշ հասցնել գյուղխորհուրդներին և շրջանային գործկոմներին։



8. Այս վորոշումը ճիշտ և ժամանակին կատարելու պատասխանատվությունը դնել անձնապես Ժողտնտհաշվառման Կենտրոնական Վարչության պետ ընկ. ՈՍԻՆՍԿՈՒ վրա։

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
Նախագահ՝ Վ. ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Քարտուղար՝ Ա. ՅԵՆՈՒԿԻՁԵ

Մոսկվա—Կրեմլ
1933 թ. օգոստոսի 22-ին

---

## ՎՈՐՈՇՈՒՄ
## ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

*№ 146 29-ը հունվարի 1936 թ.*

### *ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՅԵՎ ՇՐՋԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ 1936 Թ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Ի լրումն ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1933 թ. օգոստոսի 22-ի «շրջգործկոմների և գյուղխորհուրդների հաշվետվությունները կրճատելու մասին» վորոշման և ի փոփոխումն ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1934 թ. դեկտեմբերի 7-ի «շրջգործկոմների և գյուղխորհուրդների հաշվետվությունների մասին» վորոշման — ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են՝

1. Հաստատել գյուղխորհուրդների և շրջգործկոմների պարբերական հաշվետվությունների ձևերի կից ցուցակը (տես № 1, 2, 3 և 4 հավելվածը) և 1936 թ. հունվարի 1-ից գործածության մեջ դնել։

2. Հանձնարարել ԽՍՀՄ Պետպլանի Ժողովրդական Տնտեսության Հաշվառման Կենտրոնական Վարչության պետին՝ յերեքօրյա ժամկետում հաստատել սույն վորոշումով նախատեսված շրջգործկոմների և գյուղխորհուրդների պարբերական հաշվետվու-

թյունների ձևերը և հրատարակել հրահանգ այդ ձևերի լրացման մասին:

3. Պարտավորեցնել երկրային և մարզային բաժանում չունեցող դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդներին, ինքնավար հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդներին, մարզային ու երկրային գործադիր կոմիտեներին 1936 թ. փետրվարի 1-ից վոչ ուշ շրջգործկոմներին ու գյուղխորհուրդներին ուղարկել հաշվետվությունների հաստատված ձևերի օրինակները և լրացման հրահանգները:

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
նախագահի տեղակալ՝ Վ. ՉՈՒԲԱՐ

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
քարտուղար՝ Ի. ԱԿՈՒԼՈՎ

---

Կցում № 1

## ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ 1936 Թ. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

| Ձևերի №№ | Ձևերի անունները | Ներկայացնելու պարբերականությունը | Ո՞ւմ պետք է ներկայացնել |
|---|---|---|---|
| | 1. ԿԱԶՄ. ԱՇԽԱՏԱՆՔ | | |
| 1 | Գ. Խ-ի կազմ. մասսայական աշխատանքի հաշվետվությունը | տարեկան 2 անգամ | Շրջգործկոմին |
| | 2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | | |
| 2 | Գարնանացանքի նախապատրաստման կամպանիայի մասին . . | տասնօրյա | Շրջհողբաժնին |
| 3 | Գարնան աշխատանքների և գարնանացանքի ընթացքի մասին . . | հնգօրյա | » |
| 4 | Մենատնտեսների բերքի դրության մասին . . . . | հատուկ ժամկետով | » |
| 5 | Կոլտնտեսությունների բերքի դրության մասին . . . | հատուկ ժամկետով | » |
| 6 | Բերքահավաքի ինվենտարի վերանորոգման մասին . . . | տասնօրյա | Շրջհողբաժնին |
| 7 | Կատարված հերկի, քաղհանի, խոտհնձի և սիլոսացման մասին . . | հնգօրյա | » |
| 8 | Բերքահավաքի, աշնանացանի և ցրտահերկի մասին . . . | » | » |
| 9 | Ցանովի խոտաբույսերի համար սերմարաններ հատկացնելու մասին . | 3 անգամ (1/5, 1/6 և 15/6) | » |
| 10 | Կոլեկտիվացման ընթացքի մասին | յեռամսյա | » |
| 11 | Գյուղատնտեսական բույսերի և կենդանիների վնասատուների դեմ պայքարելու միջոցառումների մասին | տասնօրյա | » |
| 12 | Կովազուրկ կոլտնտեսականներին կով ձեռք բերելու գործում օժանդակություն ցույց տալու և բանող անասունների դրության մասին . . | ամսական | » |
| 13 | Բեղմնավորման կամպանիայի ընթացքի և անասնաբուծության զարգացման պլանը կոլխոզներին, կոլտնտեսականներին ու մենատնտեսներին հասցնելու մասին . . | ամսական | » |
| 14 | Կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսություններում մուտք և ելք յեղած անասունների մասին, վորոնք գրանցված են պետական և շրջանային տոհմային գրքերում . | միանվագ | » |
| 15 | Հաշվետվություն խոպանները յուրացնելու և մարգագետիններն ու արոտավայրերը բարելավելու մասին | ամսական ապրիլից-նոյեմբերի շրջանում | » |
| | 3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ | | |
| 16 | Միջոցների մոբիլիզացիայի մասին | ամիսը 3 անգամ | Շրջֆինբաժնին |
| 17 | Պետ. փոխառության պարտատոմսերն ստանալու և ծախսելու մասին | տարեկան 1 անգ. | Խնայդրամարկղ. |
| 18 | 1936 թ. հաշվարկված և գանձված գյուղհարկի և գյուղհարկի ու ինքնահարկման ապառքների մասին տնտեսությունների բոլոր կատեգորիաների գծով . . . . . | տարեկան 3 անգ. | Շրջֆինբաժնին |

| Ձևերի №№ | Ձևերի անունները | Ներկայացնելու պարբերականությունը | Ո՞ւմ պետք է ներկայացնել |
|---|---|---|---|
| 19 | Հաշվետվություն կուլտ. հարկի հաշվարկման և գանձման մասին . | տարեկան 2 անգ. | Շրջֆինբաժնին |
| 20 | Հաշվետվություն ինքնահարկման յեկամուտների և ծախքերի մասին . | տարեկան 2 անգամ (ձևը չի կցվում, կսահմանվի ինքնահարկման 1936 թ. որենքը հրապարակվելուց հետո) | |
| 21 | 2-րդ հնգամյակի փոխառության բաժանորդագրության ընթացքը կոլտնտեսականների մեջ . . | ամիսը 1 անգամ (բաժանորդագրության 1-ին ամսում հնգօրյակով, 2-րդ ամսում 15 օրը մեկ, մնացած ժամանակը ամիսը մեկ անգամ) | Խնայողդրամարկղ. |
| 22 | Բյուջեյի կատարման մասին (մուտք և յելք) . . . . . | ամիսը 1 անգամ | Շրջֆինբաժնին |
| 33 | Գյուղխորհրդային գտնվող հիմնարկների հատուկ միջոցների մասին . | տարեկան 1 անգ. | » |
| 24 | Պետական պարտադիր ապահովագրումով հաշվարկված և գանձված գումարների ու տրվող արտոնությունների մասին . . . | տարեկան 3 անգ. | » |
| 25 | Պարտադիր կամավորային ապահովագրման հաշվարկման արդյունքների մասին (նախնական) . . . | տարեկան 1 անգամ (ձևը չի կցվում, կսահմանվի 1936 թ. որենքը հրապարակվելուց հետո) | |
| | 4. ՄԹԵՐՈՒՄՆԵՐ | | |
| 26 | Ժամկետին՝ կաթի, յուղի և մսի պարտավորությունները չկատարող տնտեսությունների մասին . . | մսի գծով՝ յեռամսյակում 1 անգամ, կաթի և յուղի գծով ամիսը 1 անգամ | Մթերման կոմիտեյի շրջանային լիազորին |



| Ձևերի №№ | Ձևերի անունները | Ներկայացնելու պարբերականությունը | Ո՞ւմ պետք է ներկայացնել |
|---|---|---|---|
| 27 | Ժամկետին՝ բրդի պարտավորությունները չկատարող տնտեսությունների մասին . . . . | տարեկան 2 անգ. | Մթերման կոմիտեյի շրջանային լիազորին |
| 28 | Պարտավորությունները չկատարված մասի դիմաց (նատուրայով) և դրամական տուգանքներով կատարված գանձումների մասին . . | Յուղի, կաթի և հացահատիկային կուլտուրաների գծով ամիսը 1 անգամ, մսի գծով՝ յեռամսյակում 1 անգամ, իսկ բրդի գծով՝ տարեկան 2 անգ. | Մթերման կոմիտեյի շրջանային լիազորին |
| | 5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ | | |
| 39 | Թոշակառուների շարժման մասին | տարեկան 1 անգ. | Շրջ. ապահ. բաժնին |
| | 6. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ | | |
| 30 | Քաղաքացիական կեցության արձանագրությունների յերկրորդ օրինակների ցուցակ . . . . | ամիսը 1 անգամ | ՆԳԺԿ Լիազորության շրջ. վարչությանը (գաղտնի բաժ.) |
| | 7. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | | |
| 31 | Հաշվետվություն ճանապարհաշինարարության պլանի կատարման և բնակչության աշխատանակցության մասին . . . . . | ամիսը 1 անգամ | Շրջ. ճան. բաժնին |
| | 8. ԱՇԽԱՏԱՆՔ | | |
| 32 | Աշխատավարձի ֆոնդի ծախսման և աշխատավորների թվի մասին . | յեռամսյակը մեկ անգամ | Շրջգործկոմին |
| | 9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹ. | | |
| 33 | Ապահովագրական մուծումների հաշվարկման տեղեկագիր . . | ամիսը 1 անգամ | Շրջպրոֆկազմակերպ. և պետբանկի շրջբաժանմունքին |

Կցում № 2

## ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ 1936 ԹՎԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

| Ձևի № | Ձևերի անունները | Ներկայացնելու պարբերականությունը | Ում պետք է ներկայացնել | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| | Ա. ԻՐՐԻԳԱՑԻՈՆ ՍԻՍՏԵՄԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԳԾՈՎ | | | |
| 1 | Աշնան-ձմեռային և ձմեռ-գարնանային ջրումների մասին | տասնօրյա | Շրջհողբաժնին | |
| 2 | Վեգետացիայի շրջանում ջրելու ընթացքի մասին | հնգօրյա | Շրջհողբաժնին | |
| | Բ. ԲԱՄԲԱԿԻ ՀՈՂԵՐԻ ՆԱԽԱՑԱՆՔԱՅԻՆ ՄՇԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ | | | |
| 3 | Բամբակի հողերի նախացանքային մշակման ընթացքի մասին | հնգօրյա | Շրջհողբաժնին | |
| | Գ. ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՏԱՊՏՂԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ | | | |
| 4 | Այգիներ, հատապտղաստաններ, խաղողանոցներ տնկելու մասին | տասնօրյա | Շրջհողբաժնին | |
| 5 | Այգիների, հատապտղաստանների և խաղողանոցների ամառային խնամքի մասին | տասնօրյա | Շրջհողբաժնին | |
| 6 | Պլանտացիաներ գցելու մասին | տասնօրյա | Շրջհողբաժնին | |
| 7 | Տնկարաններ գցելու մասին | Ձևերը և ժամկետները կսահմանվեն լրացուցիչ | | |
| 8 | Պլանտացիաներում կատարվելիք աշնան-ձմեռային աշխատանքի մասին | | | |
| 9 | Պլանտացիաների ամառային խնամքի մասին | | | |



# ՎՈՐՈՇՈՒՄ

## ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

*1933 թ. դեկտեմբերի 22-ին*

Հաշվառման վերաբերյալ անկանոն տեղեկություններ ու հաշվետու տվյալներ ներկայացնելու, նաև հաշվառման և հաշվետվության ձևերն ու ժամկետները խախտելու վերաբերյալ պատասխանատվություն սահմանելու մասին:

*ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1933 թ. նոյեմբերի 27-ի վորոշման հիման վրա («Իզվեստիա» № 201/5222, 1933 թ. նոյեմբերի 30) Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ՝*

*1. Հաշվառման և հաշվետվության վերաբերյալ դիտավորյալ կերպով աղավաղված տեղեկություններ ու տվյալներ ներկայացնող անձանց յենթարկել պատասխանատվության Քր. Օր. 135 հոդ. համաձայն:*

*2. Հաշվառման և հաշվետու նյութերի վերաբերյալ սահմանված ձևերն ու ժամկետներն սիստեմատիկաբար ու չարամտորեն խախտելու դեպքում մեղավորներին պատասխանատվության յենթարկել Քր. Օր. 137 հոդ. իսկ մեղմացուցիչ հանգամանքներում՝ 138 հոդ. 2-րդ մասի համաձայն:*

*3. Պարտավորեցնել Ժողտնտհաշվարկչությանը՝ հիշյալ հանցանքներով մեղադրվող անձանց անշեղորեն յենթարկել քրեական պատասխանատվության:*

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
նախագահ՝ Ս. ՄԱՐՏԻԿՅԱՆ

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
նախագահի տեղակալ՝ Ա. ՅԵՐԶՆԿՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
քարտուղար՝ Ի. ԴԱՇՏՈՅԱՆ

# ՀՐԱՀԱՆԳ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 1936 ԹՎԻ ՁԵՎԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1933 թ. օգոստոսի 22-ի որոշումով բոլոր գյուղխորհուրդների և շրջանային գործադիր կոմիտեների համար հաստատված է հաշվետվությունների ձևերի ցանկ, որոնցով գյուղխորհուրդներն ու շրջգործկոմները պետք է առանձին կազմակերպություններին ներկայացնեն զանազան հաշվետու տեղեկություններ:

Այս օրենքը գյուղխորհուրդներին և շրջգործկոմներին ազատում է ավելորդ, բյուրոկրատիկ հաշվետվություններից և ճիշտ կերպով ցույց տալիս, թե գյուղխորհուրդներն ու շրջգործկոմներն ում, երբ և ինչպիսի՞ ձևերով պետք է ներկայացնեն իրենց բոլոր հաշվետվությունները:

Բացի այդ, օրենքում մատնանշված է, որ գյուղխորհուրդների և շրջգործկոմների նախագահներին ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ներկայացնել օրենքով չնախատեսված ձևերով, ժամկետներով և հասցեներով որևէ հաշվետվություն: Դատախազական մարմինները պարտավոր են պատասխանատվության ենթարկել այն բոլոր անձնավորություններին, որոնք գյուղխորհուրդներից ու շրջգործկոմներից կպահանջեն ապօրինի հաշվետվություններ:

Գյուղխորհուրդների և շրջգործկոմների աշխատանքները հեշտացնելու նպատակով ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ նորից վերանայելով հաշվետվությունների գոյություն ունեցող ցանկն ու ձևերը, հնարավոր գտան կատարելու նոր կրճատումներ: Այս կապակցությամբ՝ ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1936 թ. հունվարի 29-ին հրապարակեցին նոր որոշում, որի հիման վրա հաշվետվության հաստատված ձևերի ու ցանկի մեջ մտցված են համապատասխան փոփոխություններ:

ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ կողմից 1936 թ. հունվարի 29-ին հաստատված 1936 թ. հաշվետվությունների ցանկն ու ձևերը բոլոր գյուղխորհուրդների ու շրջգործկոմների համար պարտադիր են, և ոչ ոք իրավունք չունի 1936 թ. գյուղխորհրդից կամ շրջգործկոմներից պահանջելու որևէ այլ հաշվետվություն՝ բացի ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ կողմից հաստատված հաշվետվություններից:

Այսպիսով, գյուղխորհուրդներն ու շրջգործկոմներն ազատվելով ավելորդ հաշվետվություններից, պարտավոր են ձեռք առ-



նել բոլոր միջոցները, որպեսզի սահմանված հաշվետվությունները կազմվեն ճիշտ և ժամանակին:

Չպետք է մոռանալ, որ կազմելով հաշվետվություն՝ գյուղխորհուրդները կատարում են բարձր պատասխանատու-քաղաքական գործ: Գյուղխորհրդի նախագահն ու քարտուղարը պետք է լավ հիշեն, որ նրանց հաշվետվությունների հիման վրա կուսակցությունն ու իշխանությունը կառուցում են սոցիալիստական տնտեսության զարգացման ժողովրդական տնտեսության պլանը, և հետևում նրա կատարմանը: Դրա համար էլ հաշվետվության մեջ թույլ տված յուրաքանչյուր սխալ հանդիսանում է հսկայական չարիք: Պետք է ձեռք առնել բոլոր միջոցները, որպեսզի հաշվետու բոլոր տվյալները լինեն անպայման ստույգ: Վոչ ճիշտ հաշվետվությունը կարող է թյուրիմացության մեջ գցել կուսակցությանն ու կառավարությանը: Ահա թե ինչո՞ւ, հաշվետվության գործին այդպիսի լուրջ ուշադրություն է դարձվում:

Բոլոր նրանք, որոնք չեն ներկայացնի ճիշտ տեղեկություններ, օրենքով կենթարկվեն խիստ պատասխանատվության: ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1933 թ. նոյեմբերի 27-ի օրենքում ասված է՝ դիտավորյալ կերպով հաշվառման ու հաշվետվության աղավաղված տվյալներ ներկայացնելու, ներկայացվող հաշվառման-հաշվետվության նյութերի սահմանված ձևերն ու ժամկետները պարբերաբար, կամ չարամտորեն խախտելու համար՝ մեղավորները յենթակա յեն քրեական պատասխանատվության:

Գյուղխորհրդների աշխատողները, որոնք կենսագործում են կուսակցության ու կառավարության պատասխանատու դիրեկտիվները, պետք է հատուկ ուշադրությամբ վերաբերվեն հաշվետվությունները կազմելու գործին և ներկայացնեն այն խիստ կերպով սահմանված ժամկետներին:

Գյուղխորհրդների հաշվետվությունները կազմելու աշխատանքները թեթևացնելու նպատակով Ժողտնտհաշվառման Կենտրոնական վարչությունը մշակել է ստորև բերված համառոտ հրահանգը, որով բացատրվում է, թե ինչպես պետք է լրացնել հաշվետու ձևերը:

## 1-ԻՆ ԲԱԺԻՆ.—ԿԱԶՄ. ԱՇԽԱՏԱՆՔ

### ՀՐԱՀԱՆԳ № 1 ՁԵՎԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Մինչև գյուղխորհրդների կազմ. մասսայական աշխատանքների մասին հաշվետվություն կազմելը, պետք է ուշադիր

կերպով ուսումնասիրել ամբողջ բլանկը, կարդալ հրահանգը, պատրաստել հաշվետվության համար անհրաժեշտ բոլոր նյութերը, ինչպես օրինակ՝ գյուղխորհուրդների սկզբնական հաշվառման № 50 ձևով տարվող գյուղխորհրդի անդամների ցուցակը, սեկցիաների և պատգամավորական խմբակների անդամների ցուցակները, գյուղխորհրդի հաշվետու ժողովների արձանագրությունները,—նույնպես ընտրողների կողմից նակազով տրված առաջադրանքների ցուցակը, նշել նրանցից որոնք են կատարված—հաշվելով կատարվածների թիվը, նույնպես սեկցիաների ու պատգամավորական խմբակների համար քանի խորհրդակցական օրեր են անցկացված և դրանից հետո միայն սկսել հաշվետվությունը կազմելու գործը:

2. ԽՍՀՄ և ԺԿԽ-ի 1934 թ. հունվարի 26-ի գյուղխորհուրդների սկզբնական հաշվառման մասին ունեցած որոշման համաձայն բոլոր գրանցումները ժամանակին ու ճիշտ կերպով կատարելու և փաստաթղթերը պահպանելու պատասխանատվությունը դրըվում է գյուղխորհուրդների քարտուղարների վրա:

Հաշվետվության մեջ մտցրված թվական տվյալները պետք է հիմնված լինեն փաստացի տվյալների վրա, որպեսզի միշտ էլ հնարավոր լինի ստուգել ներկայացված տվյալների ճշտությունը և այդ ձևով ստուգված հաշվետվությունը միայն պետք է ստորագրեն գյուղխորհրդի նախագահն ու քարտուղարը:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3. Գյուղխորհրդի լիազորների թվի մասին 3-րդ կետը լրացնելու համար տվյալները վերցվում են գյուղխորհրդի կազմակերպչական, կամ հետևյալ ժողովի արձանագրություններից:

## ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

4. Այս բաժինը լրացվում է վերջին ընտրության ժամանակ ընտրված գյուղխորհրդի անդամների և թեկնածուների անվանացուցակներից, կամ անձնական քարտերից և արտահայտում է գյուղխորհրդի անդամների ու թեկնածուների շարժումը և նրա կազմը հաշվետու կիսամյակի վերջում:

5. 1, 2 և 3-րդ սյունակներում ցույց է տրվում՝ 1936 թ. 1-ին կիսամյակի հաշվետվության մեջ՝ խորհուրդների ընտրության ժամանակ՝ խորհուրդներում քանի անդամ և թեկնածու է ընտրըված, իսկ 2-րդ կիսամյակի հաշվետվության մեջ՝ քանի հոգի



էին գյուղխորհրդի անդամներն ու թեկնածուները առ 1-ն հուլիսի 1936 թ., ըստ որում 2-րդ կիսամյակի հաշվետվությունը կազմելիս 2-րդ և 3-րդ սյունակների համար տվյալները պետք է վերցնել 1-ին կիսամյակի հաշվետվության 9 և 10-րդ սյունակներից:

6. 4—6 սյունյակներում ցույց է տրվում՝ 1-ին կիսամյակի հաշվետվության մեջ—գյուղխորհրդի անդամներից և թեկնածուներից քանի հոգի յեն յետ կանչված ընտրողների կողմից և քանիսն են դուրս եկել (4-րդ սյունյակ) մեխանիկորեն (բնակավայրը փոխելու, հիվանդության և այլ պատճառներով) խորհրդների ընտրություններից մինչեվ 1936 թ. հուլիսի 1-ը, իսկ 2-րդ կիսամյակի հաշվետվության մեջ 1936 թ. հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը:

7. 7—8 սյունյակներում ցույց է տրվում խորհուրդների ընտրություններից հետո գյուղխորհրդում ընտրված անդամ-թեկնածուների թիվը, ըստ որում 1-ին կիսամյակի հաշվետվության մեջ ցույց է տրվում ընտրությունից հետո մինչև 1936 թ. հուլիսի 1-ը կայացած ընտրական ժողովների տվյալները, իսկ 2-րդ կիսամյակի հաշվետվության մեջ՝ ընտրական այն ժողովների մասին, որոնք կայացել են հուլիսի 1-ից մինչև դեկտեմբեր 31-ը շրջանում:

Այս սյունյակները լրացնելու համար տվյալները պետք է վերցնել ընտրական այն ժողովների արձանագրություններից, որոնք տեղի յեն ունեցել խորհրդների ընտրությունից հետո:

8. 9-րդ սյունյակը պետք է հավասար լինի 3-րդ սյունյակին հանած 4-րդ սյունյակը, գումարած 7-րդ սյունյակը:

9. 10-րդ սյունյակը պետք է հավասար լինի 2-րդ սյունյակին՝ հանած 5-րդ սյունյակը, գումարած 8-րդ սյունյակը:

10. 11-րդ սյունյակում «Համ Կ(բ)Կ անդամներ և թեկնածուներ», մտցվում են նաև Համ ԼԿՅԸՄ այն անդամները, որոնք Համ Կ(բ)Կ-ի անդամ, կամ թեկնածու չեն, որոնք այս դեպքում 12-րդ սյունյակում հաշվի չեն առնվում:

Համակրողները 11 և 12-րդ սյունյակներում հաշվի չեն առնվում:

11. 13-րդ սյունյակում, «կոլտնտեսականներ» ցույց է տրըվում գյուղխորհրդի անդամներից քանիսը կոլխոզի անդամ են (գյուղատնտեսական արտել, կոմունա, հողօգտագործական ընկերություն):

12. 15-րդ սյունյակում «բանվորներ», պետք է մացնել գյուղատնտեսական բանվորներին, մանր և խոշոր արդյունաբերական ձեռնարկների բանվորներին, ինչպես և գյուղխորհրդի այն անդամներին, վորոնք մինչև վարչատնտեսական և հասարակական աշխատանքի անցնելը յեղել են բանվորներ գյուղատնտեսության մեջ, տրանսպորտում, կամ արտադրության մեջ։

## ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

13. 3-րդ բաժնի 1-ին սյունյակում—գյուղխորհրդի սեկցիաների մասին—պետք է նշել՝ աշխատո՞ւմ է սեկցիան, թե՞ վոչ. աշխատող սեկցիաների դիմաց պետք գրել «այո», իսկ չաշխատողներին «վոչ»։

4-րդ բաժնի 1-ին սյունյակում այս կամ այն տեսակի պատգամավորական խմբակի դիմաց պետք է նշել՝ քանի՞ խմբակ է կազմակերպված, իսկ 2-րդ սյունյակում՝ դրանցից քանի՞սն են աշխատում։ Որինակ յեթե գյուղխորհրդի տերիտորիայում կա 5 կոլխոզ, իսկ պատգամավորական խմբակներ կազմակերպված են միայն 3 կոլխոզներում, ապա 1-ին սյունյակում գրված է 3, իսկ յեթե այդ խմբակներից մշտապես աշխատում են 2-ը, ապա 2-րդ սյունյակում գրվում է 2։

Յեթե սեկցիա, կամ պատգամավորական խմբակ չի կազմակերպվել, ապա պետք է համապատասխան բաժնում գրել «չի կազմակերպված»։

14. 3-րդ բաժնի 2-րդ և 4-րդ բաժնի 3-րդ սյունյակներում «ընդամենը անդամներ» նշվում է սեկցիաներում և պատգամավորական խմբակներում ընդգրկված գյուղխորհրդի անդամ-թեկնածուների և ներգրավված ակտիվի թիվը, այսինքն այն անձանց, վորոնք խորհրդի անդամ, կամ թեկնածու չեն։

3-րդ բաժնի 4-րդ և 4-րդ բաժնի 5-րդ սյունյակներում նշվում է թե սեկցիաներում ու պատգամավորական խմբակներում ինչքա՞ն կանայք են ներգրավված։

15. 6-րդ (7) սյունյակներում պետք է ցույց տալ սեկցիայի (խմբակի) անդամների թիվը, վորոնք վոչ միայն մասնակցում են սեկցիայի (խմբակի) նիստերին, այլ և խորհրդում, սեկցիայում, խմբակում և բրիգադայում կատարում են մշտապես պրակտիկ աշխատանք։

16. 7-րդ (8) սյունյակներում պետք է ցույց տալ սեկցիաները, պատգամավորական խմբակներն, այս կամ այն հարցով



քանի՞ մշտական բրիգադաներ են կազմակերպել իրենց ոգնելու համար։ Որինակ, ճանապարհների և կապի սեկցիան կազմակերպե՞լ է բրիգադա կամուրջների կառուցման համար, կամ կուլտուրական սեկցիան՝ դպրոցի վերանորոգման համար և այլն.

17. 8-րդ (9) սյունյակներում ցույց է տրվում ընթացիկ կիսամյակում սեկցիաների և պատգամավորական խմբակների կողմից մշակված պրակտիկ առաջադրանքների քանակը, վոչ թե քննարկված հարցերը։

18. 9-րդ (10) սյունյակներում ցույց է տրվում կատարված առաջադրանքների քանակը։

## ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

19. Հաշվետու ժողովների տրձանագրությունների տվյալներով 1-ին կետում գրվում է՝ քանի հաշվետու ժողովներ են կայացել տվյալ կիսամյակում, այդ ժողովներին ինչքա՞ն ընտրողներ են մասնակցել և ի լրումն նակաղի, ընտրողներին ինչքան առաջադրանքներ են տվել։

20. 2-րդ կետը լրացնելիս 1-ին կիսամյակի հաշվետվության համար պետք է հաշվել՝ ընտրության ժամանակ ընտրողները նակազով ինչքա՞ն առաջադրանքներ են տվել գյուղխորհրդներին, ինչքա՞ն առաջադրանքներ են արել ընտրողները՝ ընտրությունից հետո կայացած հաշվետու ժողովներում և այդ առաջադրանքներից քանի՞սն են կատարված մինչև 1936 թ. հուլիսի 1-ը։

2-րդ կիսամյակի հաշվետվության մեջ մտցրված և կատարված առաջադրանքների տվյալները ցույց է տրվում ամբողջ տարվա համար

## 2-ՐԴ ԲԱԺԻՆ.—ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Գյուղխորհուրդը հաշվետվություն է տալիս իր բոլոր կոլտնտեսությունների, կոլտնտեսականների, մենատնտեսների և հիմնարկների աշխատանքների մասին։ Կոլտնտեսությունների և գյուղացիական անհատական տնտեսությունների վերաբերյալ գյուղխորհուրդը հաշվետվություն է ուղարկում ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1936 թ. հունվարի 29-ի վորոշման մեջ թվարկված բոլոր ձևերով, իսկ հիմնարկների տնտեսությունների վերաբերյալ՝ միայն գարնանացանի, աշնան ցանքի ընթացքի և խոտհնձի ու սիլոսացման ընթացքի մասին, իսկ կոլտնտեսականների տնտեսությունների վերաբերյալ՝ հաշվետվություններ գարնան ցանքի



11-28059

ընթացքի. յեզրափակիչ հաշվետվություն—գարնան ցանքի և հաշվետվության աշնանացանի, բերքահավաքի մասին:

Խորհտնտեսությունների մասին գյուղխորհուրդները հաշվետվություն չեն ներկայացնում, քանի վոր նրանք պարտավոր են իրենց հաշվետվությունն անմիջականորեն ուղարկել շրջհողբաժնին:

Սակայն գյուղխորհուրդը պետք ե հողբաժնից ստանա այն բոլոր տնտեսությունների ցուցակը, վորոնք անմիջականորեն հաշվետվություն են ներկայացնում շրջհողբաժնին, վորպեսզի մնացած բոլոր տնտեսությունները հաշվետու լինեն գյուղխորհրդի առաջ և վոչ մի դեպքում թույլ չպետք ե տալ, վորպեսզի վորեվե ցանք, կամ խոտհարք մնա առանց հաշվի առնելու:

2. Հաշվետվություններն իր ժամանակին և ճիշտ ներկայացնելու նպատակով՝ գյուղխորհուրդը պետք ե հոգ տանի ընտրելու ստուգված մարդկանց, վորոնք նրան պետք ե տան հաշվետու տեղեկություններ:

Կոլտնտեսության մասին ներկայացվող հաշվետվության համար պատասխանատու յե կոլտնտեսության նախագահը, Մենատնտեսների, կոլտնտեսականների և հիմնարկների աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը գյուղխորհուրդը պետք ե կազմակերպի իր լիազորների միջոցով,

3. Գյուղխորհուրդը պետք ե հավաքի իր բոլոր լիազորներին և նրանց մանրամասն բացատրի, թե ինչի՞ մեջ ե կայանում նրանց պարտականությունները և ինչպե՞ս պետք ե տանեն նրանք իրենց աշխատանքները:

Պետք ե լիազորներին ցույց տալ, վոր դասակարգային թշնամին այստեղ նույնպես ամեն կերպ ձգտում ե վնաս հասցնել խորհրդային իշխանությանը, թաքցնել նրանից ցանքսերի իսկական չափը: Լիազորի խնդիրը կայանում ե նրանում, վորպեսզի հայտնաբերի դիտավորյալ կերպով թաքցված բոլոր դեպքերը և հանցավորներին յենթարկի պատասխանատվության:

Այդ նույն խորհրդակցությունում գյուղխորհուրդը պետք ե յուրաքանչյուր լիազորին ծանոթացնի գյուղխորհրդի լիազորի գրքույկի (ձև № 17) հետ—գյուղատնտեսական կամպանիայի ընթացքի հաշվառման մասին: Լիազորներին պետք ե բացատրել, թե ինչպե՞ս պետք ե լրացնել այդ գիրքը՝ հատկապես գարնան ցանքի ընթացքի հաշվետվությունը կազմելիս:

Գարնանացանի կամպանիայի ընթացքի հաշվառման վերա-



բերյալ—գյուղխորհրդի լիազորի գրքույկի լրացման կարգը ցույց ե տրված գյուղխորհրդի հաշվառման հրահանգում, նմանապես և գյուղատնտեսական հաշվառման վերաբերյալ—գյուղխորհրդի լիազորի գրքույկի (ձև № 17) վրա:

4. Գյուղխորհուրդը պարտավոր ե հաշվետվությունը կազմակերպել այնպես, վորպեսզի յուրաքանչյուր հաշվետու ժամկետին նրա մոտ ստացվեն տեղեկություններ անպայման բոլոր կոլտնտեսություններից և գյուղխորհրդի լիազորներից՝ ճիշտ սահմանված ժամկետներին:

Յեթե վորեվե կոլտնտեսություն, կամ գյուղի լիազոր գյուղխորհրդին իր ժամանակին չի տալիս անհրաժեշտ հաշվետու տեղեկությունները, կամ յեթե տված տեղեկությունները կազմված են վոչ ճիշտ՝ սխալներով և աղավաղումներով, ապա գյուղխորհուրդը պետք ե հանցավորներին յենթարկի պատժի: Յեթե կոլտնտեսության, կամ գյուղի լիազորի կողմից նկատվեն գյուղխորհրդին հաշվետու տեղեկությունները ներկայացնելու գործում ուշացումների հաճախակի դեպքեր և այդ տեղեկությունների մեջ պարբերաբար նկատվեն սխալներ կամ աղավաղումներ, գյուղխորհուրդը, ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 1933 թ. նոյեմբերի 27-ի վորոշման համաձայն հանցավորների գործը տալիս ե դատարանին՝ նրանց քրեական պատասխանատվության յենթարկելու համար:

5. Գյուղխորհուրդը պատասխանատու յե, վորպեսզի հաշվետու տեղեկությունները, վորոնք նա հանձնում ե շրջանին, լինեն ճիշտ և ստույգ. դրա համար ել չպետք ե միայն ամփոփել կոլտնտեսությունների ու լիազորների ներկայացրած բոլոր տեղեկությունները և ուղարկել շրջան, այլ պարտավոր ե ստացված տեղեկությունները նախ մանրամասն ստուգել, ապա նոր կազմել այս կամ այն հաշվետվությունը: Այդ ստուգումը պետք ե կատարվի այս կերպ. առաջինը՝ տեղերում մշտապես հսկել բոլոր կոլտնտեսությունների և լիազորների հաշվառման աշխատանքների վրա, իսկ այդ նշանակում ե, վոր գյուղխորհրդի նախագահը պարտավոր ե, լինելով կոլտնտեսությունում ստուգել, արդյոք ճիշտ են տարվում կոլտնտեսություններում բրիգադիրների ամենօրյա գրանցումները, արդյոք ճիշտ են կատարվում գրանցումները լիազորների գրքերում և համապատասխանում են նրանք իրականությանը:

Յերկրորդ՝ կոլտնտեսությունից և լիազորից ստացված տե-

դեկությունները պետք է համեմատել նախորդ ժամկետին նրանց կողմից տրված տեղեկությունների հետ։

Գյուղխորհուրդը պետք է իմանա, որ ոչ ճիշտ տեղեկություններ ներկայացնել՝ դա նշանակում է խաբել խորհրդային պետությանը, իսկ կեղծ տեղեկություններ հաղորդելու համար գյուղխորհրդները կրում են խիստ պատասխանատվություն։

Գյուղխորհրդի հաշվետվության համար ամբողջությամբ պատասխանատու են գյուղխորհրդի նախագահն ու քարտուղարը։

Հաշվետվության բոլոր նյութերը՝ կոլտնտեսությունների հաշվետվությունները, գյուղխորհրդի լիազորների գրքույկները, գյուղատնտեսական կամպանիաների հաշվառման որագիրը (ժուռնալ № 18) պետք է պահվեն գյուղխորհրդի գործերում ամբողջ տարվա ընթացքում և լինեն այնպիսի վիճակում, որպեսզի գյուղխորհուրդը միշտ էլ կարողանա լրիվ պատասխանատվությամբ, փաստաթղթերով հաստատել իր հաղորդած տեղեկությունները։

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՈՒ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԿԱՐԳԸ

6. Կոլտնտեսություններից և լիազորներից հաշվետվությունները ստանալիս, գյուղխորհուրդը պարտավոր է անմիջապես ստուգել դրանք, հաշվետվությունը բերող անձի ներկայությամբ։ Պետք է ստուգել, թե արդյոք կոլտնտեսությունը, կամ գյուղխորհրդի լիազորը հաշվետու բլանկի բոլոր հարցերի վերաբերյալ են տալիս տեղեկություններ, համեմատելով այն նախորդ ժամկետի հաշվետվության հետ և համոզվել այն բանում, որ աճող թվերով տրվող տեղեկությունները պակաս չեն քան առաջվա հաղորդածները։ (Օրինակ՝ կոլտնտեսությունը առ 5-ն մայիսի հաշվետվության մեջ հայտնել է, որ իր կողմից ցանված է 205 հեկտար, իսկ առ 10-ն մայիսի տալիս է հաշվետվություն, որ ընդամենը ցանված է 195 հեկտար, տվյալ դեպքում պետք է պարզել, թե ինչու առ 10 մայիսի հաշվետվության մեջ պակաս է ցույց տըրված 10 հեկտար)։ Գյուղխորհուրդը պետք է նույնպես ըստ էության ստուգի ներկայացված հաշվետվության ճշտությունը։ (Օրինակ՝ նախագահին հայտնի չէ, որ տվյալ գյուղում մենատնտեսների մոտ բերքահավաքը վերջացել է ամբողջ տարածության վրա, իսկ լիազորը ներկայացված հաշվետվության մեջ ցույց է տալիս հավաքված հեկտարների ոչ լրիվ թիվը)։ Յեթե նշված



թերությունները հայտնաբերվեն, այդ դեպքում գյուղխորհրդի նախագահը պետք է անմիջապես գյուղի լիազորի, կամ կոլտնտեսության նախագահի հետ միասին տեղում (դաշտում, տնտեղում և այլն) ստուգի հաշվետու տեղեկությունների ճշտությունը։ Յեթե սխալներ հայտնաբերվեն, ապա անհրաժեշտ է մտցնել համապատասխան ուղղումներ կոլտնտեսության, կամ գյուղի լիազորի ներկայացրած հաշվետվության մեջ և չարամտորեն թաքցված, կամ աչքակապություն հայտնաբերելիս (Օրինակ՝ կոլտնտեսությունը բացորոշ է տալիս գարնանացանի ավարտման մասին, իսկ փաստորեն ցանքը չի վերջացած), հանցավորներին յենթարկում է պատասխանատվության։

7. Գյուղխորհուրդը պարտավոր է աշխատել, որպեսզի առանց բացառության բոլոր կոլտնտեսություններից ու լիազորներից հաշվետվություններն ստացվեն սահմանված ժամկետին։

Յեթե տվյալ ժամկետի համար որևէ կոլտնտեսության, կամ գյուղի լիազորի հաշվետվությունը բացակայում է, (որը վկայում է այն մասին, որ գյուղխորհուրդը չի կարողացել այնտեղ կարգավորել հաշվետվություն) գյուղխորհուրդը պարտավոր է ամփոփման մեջ մտցնել նախորդ ժամկետի հաշվետվության տեղեկությունները՝ այդ մասին համապատասխան նշումներ կատարելով հաշվետվության մեջ։ Վճռականապես արգելվում է իրեն՝ գյուղխորհրդին, ինչպես ինքնագլուխ կերպով տեղեկություններ մտցնելը, կոլտնտեսությունների կամ գյուղերի նկատմամբ, որոնք չեն ներկայացրել հաշվետվություն, նույնպես և առանց համապատասխան փաստաթղթերի այս կամ այն ուղղումներ կատարելը ստացված հաշվետվություններում։

8. Ամբողջ գյուղխորհրդի համար ամփոփումը ճիշտ կազմելու համար, յուրաքանչյուր կամպանիայի վերաբերյալ ստացված բոլոր հաշվետվությունները գյուղխորհրդի քարտուղարը գրանցում է «Գյուղատնտեսական կամպանիայի ընթացքի հաշվառման որագրում» առանձին կոլտնտեսությունների և առանձին գյուղխորհրդի լիազորների նկատմամբ։ («Գյուղխորհրդի հաշվառման» Ձեվ № 18)։

Որագրում այդ գրանցումները կատարելուց հետո պետք է նրա մեջ հանրագումարի բերել տվյալներ առանձին-առանձին՝ ըստ կոլտնտեսությունների, կոլտնտեսականների, մենատնտեսների և հիմնարկների։

Այնուհետև այդ հանրագումարները պետք է մտցնել գյուղ-

խորհրդի համապատասխան հաշվետվական քարտի մեջ։ Քարտը պետք է ստորագրեն գյուղխորհրդի նախագահն ու քարտուղարը և շտապ ուղարկեն շրջհողբաժնին։

Իր հաշվետվության հետ միասին, գյուղխորհուրդը շրջհողբաժին է ուղարկում կոլտնտեսությունների հաշվետվական բլանկները։

Հեռախոսային կապ լինելու դեպքում թույլատրվում է հաշվետվության տվյալները հայտնել հողբաժնին հեռախոսագրով, բայց անպայման այդ նույն օրը, հաշվետվությունը պետք է ուղարկվի Շրջհողբաժնին՝ սահմանված ձևի բլանկի վրա։

## ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՅՈՒԽՈՐՀՐԴԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՁԵՎԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այստեղ բացատրություն է տրված ոչ բոլոր ձևերի ու ռուբրիկաների վերաբերյալ, այլ դրանցից միայն այնպիսիների մասին, որոնք ավելի դժվար են։

Հաշվետվության ձևերը լրացնելիս գյուղխորհուրդը պետք է ղեկավարվի, ոչ միայն այս հրահանգով, այլև կոլխոզների տարեկան հաշվետվությունների հրահանգով, որտեղ տրված են մանրամասն բացատրությունները կոլխոզների հաշվետվական ձևերը լրացնելու մասին։

Ձև № 2.—«Հաշվետվություն գարնանացանի կամպանիայի նախապատրաստման մասին»։

Այս ձևով բոլոր տեղեկությունները տրվում են աճողական թվերով, այսինքն տասնօրյա տեղեկություններ տալու ժամանակ օրինակ՝ առ 1-ն դեկտեմբերի սերմֆոնդի գանձման մասին՝ պետք է ցույց տալ ցանքին նախապատրաստվելու ամբողջ ժամանակի համար մինչև դեկտեմբերի 1-ը գանձված ամբողջ սերմերի մասին, և ոչ թե միայն հաշվետու տասնօրյակում (կամ ամսում գանձված սերմերի մասին)։

43-րդ կետը գյուղխորհուրդը լրացնում է հասարակական շտեմարանների վարիչների հաղորդումների հիման վրա, իսկ 42-րդ կետը, նույնպես նաև՝ ստորագրությամբ տնատերի մոտ թողնված հատիկային սերմերի քանակի վերաբերյալ ստացականների հիման վրա։

Ձև № 3.—«Հաշվետվություն գարնան ցանքի և գարնանային աշխատանքների ընթացքի մասին»։

Այս ձևին վերաբերող բոլոր տեղեկությունները, բացի աշ-



նան ցանքի դրությունը վերաբերող պատասխաններից, տրվում են աճողական թվերով։

Այս ձևը լրացնելու ժամանակ պետք է հիշել հետևյալը՝

ա) Տալով տեղեկություններ ցանված տարածությունների մասին (1-ին 34 կետերով), պետք է նրանց մեջ մտցնել ամբողջ ցանված տարածությունը՝ գերվող ժամկետում կատարված ցանքի հետ միասին։

բ) Եթե ձևի մեջ չեն նախատեսնված հացահատիկային կուլտուրաներ, որոնք սակայն կարող են լինել կոլտնտեսականների մոտ՝ ոչ համայնացված ցանքի վերաբերյալ, կամ մենատնտեսների մոտ՝ պետք է այդ ցույց տալ դատարկ տողերից մեկի մեջ, անվանելով այդ՝ «Այլ հացահատիկներ»։ 2—9 ներառյալ կետերում ցույց տրված ցանքերի տարածությունները գումարելու ժամանակ ստանում ենք գարնանացանի բոլոր հացահատիկային կուլտուրաների ամբողջ տարածությունը։

Գարնանացան հացահատիկային կուլտուրաներին են վերաբերում ցորենը, վարսակը, գարին, հաճարը, կորեկը, սորգոն, եգիպտացորենը, բոլոր ընդեղենները, վիկա հատիկի համար և չալթուկը։

գ) 23, 24, 25, 26, 27, 28 և 33, 35, 36, 37, 38 կետերով պետք է տեղեկություններ տալ խոտերի ցանքի մասին։ Այստեղ պետք է հիշել, որ 23, 24, 25, 26, 27, 28 կետերում տեղեկություններ են տրվում ընթացիկ ցանքի կամպանիայի ժամանակվա ընթացքում ցանված տարածությունների մասին, բաց վորում 26, 27 և 28 կետերով պետք է տեղեկություններ տալ միայն բազմամյա խոտերի մասին, որոնք ցանվում են ինքնուրույն տարածությունների վրա և ոչ թե յենթացանքս է արվում վորևէ այլ կուլտուրաների հետ (օրինակ՝ յերեքնուկի, ցանված աշնանացան հացահատիկի, կամ վարսակի հետ). 35 և 36 կետերով պետք է տալ տեղեկություններ յենթացանքս խոտերի ցանքի մասին, այսինքն այնպիսիների մասին, որոնք ցանվում են այլ կուլտուրայի հետ, օրինակ յերեքնուկը, որը յենթացանքս է տրվում աշնան ցանքի, կամ վարսակի հետ։ Եվ վերջապես 37, 38-րդ կետերում, որոնք լրացվում են միայն մեկ անգամ, յերբ ամբողջ գյուղխորհուրդն ավարտում է ցանքի կամպանիան, պետք է տալ տեղեկություն բազմամյա խոտերի պահպանված տարածության մասին, որոնք ցանվել են անցյալ տարիներում և այս տարի պետք է հնձվեն։ Այս կետի մեջ բնական խոտհարքների

տարածություններ մտցնելը խիստ արգելվում է: Նմանապես արգելվում է ցանքի հանրագումարի մեջ (կետ 34) մտցնել յենթացանքի տարածությունը (այսինքն ինքնուրույն տարածություն չունեցող) և բազմամյա խոտերի անցյալ տարիների ցանքերի տարածությունները: Բոլոր նման դեպքերը դիտվելու յեն վորպես աչքակապության ակնահայտ փաստեր:

դ) Աշնանացանի փչացած տարածությունների տեղեկությունները (39, 40, 41 և 42 կետեր) գյուղխորհուրդը հայտնում է մեկ անգամ առ 1-ն մայիսի հաշվետվության մեջ:

Փչացած պետք է համարել միայն այն տարածությունները, վորոնք փաստորեն վերացանված են կամ յենթակա յեն վերացանման, կամ թե օգտագործելու յեն վոչ ուղղակի նպատակով (օրինակ՝ տարեկանը, վոր հնձված է վորպես խոտ): Փչացման մասին տվյալները գյուղխորհուրդը պետք է վերցնի փչացած տարածությունները վորոշող հանձնաժողովի արձանագրությունից: Փչացման վերաբերյալ տվյալները պետք է մանրամասըն ստուգման յենթարկվեն, վորպեսզի փչացման անվան տակ չթագցվի ցանքերի իսկական չափը:

Ձև №№ 4 և 5.—Հաշվետվություն կոլտնտեսականների և մենատնտեսների բերքի տեսակների մասին» №№ 4 և 5 ձևերը լրացնելու վերաբերյալ հրահանգը Հողժողկոմատի կողմից կուղվի լրացուցիչ կերպով:

Ձև № 6.—«Հաշվետվություն բերքահավաքի ինվենտարի վերանորոգման մասին»:

Այս ձևին առանձին պարզաբանում չի պահանջում. միայն պետք է նկատի ունենալ, վոր նրա վերաբերյալ տեղեկությունները տրվում են ածողական թվերով:

Ձև № 7.—«Հաշվետվություն՝ հերկի, քաղհանի, խոտհնձի և սիլոսացման ընթացքի մասին»:

Այս ձևով տեղեկությունները տրվում են ածողական թվերով: Կետ 6-րդում.—«Քաղհանված է աշնանացանի և գարնանացանի հասկավորներ» պետք է հայտնել աշնան և գարնան ցորենի, գարու, տարեկանի և վարսակի մասին՝ բոլոր կուլտուրաների համար միասին: Մյուս կուլտուրաների քաղհանի մասին այստեղ չի հայտնվում վոչինչ:

Բանջարեղենի, արևածաղկի և յեգիպտացորենի նկատմամբ քաղհանը իր մեջ պարունակում է վոչ միայն մոլախոտերի հեռացումը այլև միաժամանակ շարքերի միջի փխրացումը:



Շաքարի ճակնդեղի նոսրացումը իր մեջ պարունակում է
վոչ միայն ճակնդեղի նոսրացումը շարքերում, այլև դրանից հե-
տո կատարվող փխրացումը, ուստի նոսրացման ավարտության
դեպքը՝ առանց շարքերի միջի փխրացման և մոլախոտերի հե-
ռացման՝ աշխատանքը չպետք է ավարտված համարել և չպետք
է մտցնել պատասխանի մեջ:

28-րդ կետում տալով տեղեկություններ խոտհնձի մասին
պետք է մտցնել միայն բնական խոտհարքների տարածությունը
և միայն առաջին հունձի մասին. բնական խոտհարքների յերկ-
րորդ հունձը հաշվետվության մեջ չի մտցվում:

29-րդ կետում ցույց է տրվում ցանովի խոտերի տարա-
ծությունը, վորը կոլտնտեսություններում հնձվել է վորպես
խոտ՝ առաջին հնձից:

Ձև № 8.—«Հաշվետվություն՝ հացահատիկների բերքահա-
վաքի, աշնան ցանքի և ցրտահերկի ընթացքի մասին»:

Այս ձևի բոլոր տեղեկությունները, բացի 3-րդ կետից
տրվում են ածողական թվերով:

«Մնացել է կույտերով, խրձերով և այլն» ցույց է տրվում
այն տարածությունները, վորի վրա հաշվետու ժամկետին հա-
ցահատիկը մնում է կույտերով, խրձերով:

ա) 1, 2, 3 և 4 հարցերում տեղեկությունները պետք է
տրվեն աշնան և գարնան ցորենի, գարու, տարեկանի և վարսա-
կի բերքահավաքի մասին (բոլորը միասին):

8 և 9-րդ հարցերում ցույց է տրվում մնացած բոլոր հացա-
հատիկային կուլտուրաների բերքահավաքը (կորեկ, հնդկացորեն
ընդեղենների և վիկա հատիկի համար, բացի յեգիպտացորենից):

բ) Վորպես տարբերություն անցյալ տարվա նկատմամբ,
յերբ դիզված հացահատիկի հեկտարների թիվը և առանց դիզե-
լու տեղափոխվածը ցույց է տրվել ընդհանուր գումարով, այս-
ինքն միայն մի թվով, այս տարի այդ տեղեկությունները պետք
է ցույց տալ առանձին-առանձին այն է՝ 2-րդ կետում «դիզված
է, կամ դարսված է ծածկի տակ աշնանացան և վաղ գարնանա-
ցան»—ցույց պետք է տալ ամբողջ այն տարածությունը, վորից
հացահատիկը դիզված է, կամ դարսված ծածկի տակ՝ հնձի սկզբից
սկսած, թեյեվ դիզված հացահատիկի մի մասն արդեն տեղափոխ-
ված է յեղել կալսիչների մոտ. այդ տարածությանն ավելացվում
է նաև կոմբայնով հավաքած տարածությունը: 7-րդ կետում ցույց
է տրվում այն տարածությունը, վորի վրա հացահատիկը կալսվել

է ուղղակի կույտերից, կամ խրձերից և այլն, այսինքն՝ առանց դիզելու. այս տարածությունները նույնպես ցույց են տրվում աճողական թվերով:

Ստուգելու համար, թե որքան ճիշտ են լրացված 3-րդ և 4-րդ հարցերը, պետք է 2-րդ կետում ցույց տրված տարածությունը գումարել 5-րդ կետում ցույց տրվածը՝ և դա պետք է հավասար լինի հնձված տարածությանը (որը ցույց է տրված առաջին հարցի պատասխանում):

3-րդ կետում.—«Կատարված է ցրտահերկ» ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1933 թ. օգոստոսի 11-ի որոշման համաձայն, ցրտահերկի մեջ չի կարող մտցվել խոզանի յերեսավարը, գարնան ցանքի համար թողնված ցելերը և փոցխված, բայց ոչ հերկված տարածությունները, որոնք դուրս են յեկել շարքահերկ կուլտուրաների տակից:

Մենատնտեսների և կոլտնտեսականների տնտեսությունների գծով աշնանացան և վաղ գարնանացան կուլտուրաների բերքահավաքը հաշվի յեն առնվում միայն յերկու ցուցանիշով. 1-ին հնձված է և 9-րդ կալսված է աշնանացան և վաղ գարնանացան:

Այդ հաշվետվության մեջ դրված է սիլոսացման հարցը: Սիլոսացումը կա նաև ցելերի, քաղհանի, խոտհնձի և սիլոսացման ընթացքի վերաբերյալ հաշվետվության մեջ: Յեթե կոլտնտեսությունն ավարտում է ցելերի և ցանքերի խնամքի աշխատանքները, իսկ սիլոսացման աշխատանքները շարունակվում են, ապա սիլոսը լցնելու վերաբերյալ տեղեկությունները տրվում են հացահատիկների բերքահավաքի ընթացքի հաշվետվության ձևով, որպես՝ ցելերի վերաբերյալ հաշվետվությամբ տրվող տեղեկությունների շարունակություն, այսինքն աճող թվերով սիլոսը լցնելու սկզբից:

Բոլոր կոլտնտեսություններից և լիազորներից—աշնանացան և վաղ գարնանացան կուլտուրաների բերքահավաքի, ինչպես նաև աշնանացանի և ցրտահերկի աշխատանքներն ավարտելուց հետո, տեղեկությունները ստանալուց, գյուղխորհուրդը պետք է այդ հաշվետվությունն ուղարկի, չսպասելով հերթական ժամկետին:

Ձև № 8.—«Հաշվետվությունը ժամկետից շուտ ներկայացնելը, գյուղխորհուրդին չի ազատում հերթական ժամկետի հաշվետվություն ներկայացնելուց:

Ձև № 9.—«Հաշվետվություն կոլտնտեսություններում ցանովի խոտերի համար սերմացուներ հատկացնելու մասին», առանձին ոչ մի պարզաբանում չի պահանջվում:



## ՁԵՎ № 10.—«ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ»

1. № 10 ձևով հաշվետվությունը լրացնելու ժամանակ հիմք պետք է ընդունել կոլխոզների կողմից գյուղխորհրդին ներկայացված հաշվետվությունները (ձև № 1) նկատի ունենալով, որ առ հաշվետու յեռամսյակի վերջին օրը կոլտնտեսություններում յեղած տնտեսությունների թիվը (ընտանիքավոր և միայնակ) պետք է հավասար լինի նախորդ յեռամսյակի վերջին օրը կոլտնտեսությունում յեղած տնտեսությունների թվին գումարած հաշվետու յեռամսյակում կոլտնտեսություն մտած տնտեսությունների թիվը (կետ 7) բաժանումից (կետ 11) և միացումից (կետ 13) հետո առաջացած տնտեսությունների թիվը, հանելով կոլտնտեսությունից դուրս յեկած և հեռացված տնտեսությունները (կետ 8) և բաժանված ու միացած տնտեսությունների թիվը (կետ 10 և 12):

Նմանապես պետք է նկատի ունենալ, որ այն դեպքում, յերբ կոլտնտեսություն է մտնում ոչ թե ամբողջ ընտանիքը—օրինակ՝ միայն որդին, ապա միևնույն է նա պետք է համարվի մի տնտեսություն և մտցվի 7-րդ կետի մեջ:

Անհատական գյուղացիական տնտեսությունների տվյալները պետք է վերցնել գյուղխորհրդի հաշվառման նյութերից:

Ներկա հաշվետվությունը լրացնելիս պետք է կատարել կոլխոզների կողմից կոլեկտիվացման ընթացքի մասին ներկայացված հաշվետվությունների մանրակրկիտ ստուգում: Այդ դեպքում պետք է նկատի ունենալ հետևյալը՝

ա) կոլեկտիվացման ընթացքի մասին հաշվետվությունները գյուղխորհրդին (ՄՏԿ-ին) ներկայացնում են միայն գյուղատնտեսական կոլեկտիվները, այսինքն՝ կոմունաները, գյուղատնտեսական արտելները և հողը միասին մշակող (հասարակական) ընկերությունները (ՏՈԶ): Այսպիսով գյուղխորհրդի—կոլեկտիվացման ընթացքի մասին—հաշվետվության 1-ին կետում չեն մտցվում արդյունաբերական կոլտնտեսությունները, արտելները, ձկնորսական կոլտնտեսությունները և այլն, նաև հատուկ արդյունագործական, ձկնորսական և այլ միությունների միացած կոլեկտիվները:

բ) Յեթե կոլտնտեսության մեջ մտել է վոչ թե ամբողջ ընտանիքը, այլ միայն նրա մի մասը, կամ նույնիսկ նրա միայն մեկ անդամը—ապա ընտանիքի այդ մասը, կամ մեկ անդամը պետք է հաշվել առանձին տնտեսություն և մտցնել 3-րդ կետում։

3. Կետ 2-րդում.—«Կոլտնտեսություն չմտած գյուղացիական տնտեսությունների թիվը»—պետք է մտցնել գյուղխորհրդի սահմաններում գտնվող միայն այն տնտեսությունները, վորոնք զբաղվում են գյուղատնտեսությամբ (ունեն գյուղհարկման յենթակա օբյեկտներ, թեև նրանք ազատված լինեն դրանից) և նրանց գլխավորողներն ունեն ընտրական իրավունք։

4. Այսպիսով 2-րդ կետի մեջ չեն մտցվում կուլակային տնտեսությունները (անհատական հարկադրվողները), կուլակաթափ արված տնտեսությունները (ընտրական իրավունքը չվերականգնածները) և մյուս տնտեսությունները, վորոնց տերերը զրկված են ընտրական իրավունքից այլ հանգամանքներով։

5. Արդյունաբերական և ձկնորսական կոլտնտեսության անդամները անկախ նրանից, վոր նրանք ունենան անհատական գյուղատնտեսական արտադրություն և գյուղհարկման յենթակա յեկամտի աղբյուրներ, այդպիսիները չեն մտցվում վոչ կոլտնտեսականների և վոչ մենատնտեսների քանակի մեջ։

6. 2-րդ կետում չեն մտցվում 4-րդ և 5-րդ կետերում նշվածների հետ միասին նաև բանվոր-ծառայողների, արհեստավորների, տնայնագործների և մյուսների տնտեսությունները, վորոնք չեն վարում գյուղացիական տնտեսություն կամ վարում են այն չափով, վոր գյուղհարկով չի հարկվում։

Ձև № 11.—«Հաշվետվություն գյուղատնտեսական բույսերի և կենդանիների վնասատուների, հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների մասին»։

Այս ձևի վերաբերյալ ցուցմունքները տրված են կոլտնտեսության հաշվետվության քարտի 2-րդ յերեսում։

Բայց գյուղխորհուրդը պետք է նկատի ունենա, վոր բույսերի վնասատուների դեմ պայքարի մասին ամփոփումը կատարելով կոլտնտեսականների հաշվետվություններով, նա պետք է ավելացնի տեղեկությունները մենատնտեսների տնտեսությունների վերաբերող և գումարը գրի հողբաժնին ուղարկվող հաշվետվության մեջ։

Ձև № 12.—«Հաշվետվություն կովագուրկ կոլտնտեսականներին կով ձեռք բերելու գործում օժանդակելու և բանող անասունների դրության մասին»։



Տեղեկությունները 1-ին բաժնի նկատմամբ—կովագուրկ կոլտնտեսականներին օժանդակություն ցույց տալու, 2-րդ բաժնի—կոլխոզ-ապրանքային ֆերմաների և կոլխոզների համար կոնտրակտացված ու գնված հորթերի քանակը տրվում է աճող գումարներով սկսած 1936 թ. հունվարի 1-ից։

Նույնպես աճող գումարներով տրվում են տեղեկությունները 4-րդ բաժնի նկատմամբ—ձիերի ծնի և մատղաշների աճեցման նկատմամբ։

Բանող անասունների դրության մասին տեղեկությունները տրվում են հաշվետու ամսի վերջին որվա դրությամբ։

Ձև № 13.—«Ամսեկան հաշվետվություն բեղմնավորման կամպանիայի մասին»։

Գյուղխորհրդի նախագահները պարտավոր են հետևել, վորպեսզի ամբողջ հաշվետու ժամանակաշրջանում բոլոր կոլտնտեսություններից և գյուղ լիազորներից հաշվետու տեղեկությունները ստացվեն իր ժամանակին և ամեն ամսի 2-ին խիստ կանոնավոր կերպով այդ տեղեկությունների ամփոփումը սահմանված ձևով ներկայացվի շրջհողբաժնին։

Ամփոփման համար ուղարկվող տեղեկությունները գյուղխորհրդում պետք է գրանցվեն բեղմնավորման կամպանիայի ընթացիկ հաշվառման աղյուսակի մեջ, վորի ձևը տրված է «գյուղատնտեսական կամպանիաների ընթացքի հաշվառման օրագրում»։ (Գյուղխորհրդների հաշվառում—ձև № 18)։

Գյուղխորհուրդը հաշվի յե առնում բեղմնավորման կամպանիայի ընթացքը՝ անհատական տնտեսությունների վերաբերյալ միայն ձիերի և կովերի նկատմամբ։

Ծնված կենդանիների թվի մեջ պետք է յուրաքանչյուր կենդանի մտցնել միայն մեկ անգամ առաջին ծածկման ժամանակ։

Ձև № 14.—«Հաղորդագրություն ավելացած և պակասած տոհմային կենդանիների մասին, վորոնք գրանցված են պետական տոհմային գրքի» (ՊՏԳ) կամ «շրջանային տոհմային գրքի (ՇՏԳ) մեջ»։

Գյուղխորհրդում կան կենդանիների ցուցակներ, վորոնք գրանցված են շրջանային և պետական տոհմային գրքերի մեջ, կազմված զոոտեխնիկի կողմից թե՝ մենատնտեսների և թե՝ կոլտնտեսականների վերաբերյալ։

Տարին վերջանալուց հետո գյուղխորհուրդը պետք է ստուգի անասնատերերի մոտ յեղած տոհմային անասունները, վորոնք գրանցված են այդ ցուցակներում և յուրաքանչյուր ավելացած, կամ պակասած անասունը, վորը գրանցված է շրջանային, կամ պետական տոհմային գրքի մեջ, գրանցի հաշվետվության № 14 ձևի մեջ, ցույց տալով պակասեցման, կամ ավելացման պատճառները:

Ձև № 16.—«Հաշվետվություն արտերի ու խոտհարքների բարելավման ու խոպան հողերի յուրացման մասին»:

Տեղեկությունները տրվում են միայն կոլխոզի վերաբերյալ:

1. Կետում ցույց է տրվում այն տարածության քանակը, վորի վրա կատարված է հիմնական բարելավում անկախ նրանից թե ինչպիսի հիմնական բարելավում է կատարված, իսկ ա, բ, գ յենթակետերում ցույց է տրված այն տարածությունների քանակը, վորոնց վրա կատարված է առանձին տեսակի բարելավումներ, պետք է ինկատի ունենալ, վոր ա, բ և գ յենթակետերի գումարը կարող է հավասար լինել 1-ին կետին, կամ նրանից մեծ լինել, վորովհետև միևնույն տարածության վրա կարող է կատարված լինել յերկու տեսակի բարելավում. որինակ՝ չորացում ու յենթացանք և այլն այդ յենթակետերի գումարը 1-ին կետից փոքր լինել չի կարող:

1-ին կետում, տարածությունը, վորի վրա կատարված է յերկու կամ մի քանի բարելավում, ցույց է տրվում միայն մի անգամ՝ որինակ 100 հեկտարի վրա կատարված է չորացում և նույն տարածության 75 հեկտարի վրա կատարված է յենթացանք 1 կետում ցույց է տրվում միայն 100 հեկտար:

## ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Գյուղխորհրդի տերիտորիայում գտնվող բոլոր կոլտնտեսությունները, ինչպես ՄՏԿ-ի կողմից սպասարկվողները, նույնպես և չսպասարկվողները, գյուղխորհրդներին հաշվետվություն են ներկայացնում կոլտնտեսությունների համար սահմանված ձևերով: Կոլտնտեսություններն այս ձևերը ստանում են հողբաժնի կողմից սահմանված կարգով՝ կամ անմիջականորեն հողբաժնի միջոցով, իսկ ՄՏԿ-ի կողմից սպասարկվող կոլտնտեսությունները՝ ՄՏԿ-ի միջոցով:



Սակայն, անկախ կոլտնտեսությունները ձևերով ապահովելու այս կարգից, գյուղխորհուրդը պարտավոր է յուրաքանչյուր կամպանիան սկսելուց առաջ ստուգել՝ ապահովված են արդյոք կոլտնտեսությունները ձևերով, և յեթե վոչ՝ աշխատել, վորպեսզի շրջհողբաժինը ձևերով ապահովի բոլոր կոլտնտեսություններին:

2. Կոլտնտեսության նախագահը հանդիսանում է պատասխանատու անձ՝ իսկ իր կողմից հաշվետվությունները ճիշտ և ժամանակին ներկայացնելու համար:

## ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ, ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Մենատնտես գյուղացիական տնտեսությունների, կոլտնտեսականների և հիմնարկների տնտեսությունների վերաբերյալ հաշվետվությունը, ինչպես ցույց է տրված վերևում, գյուղխորհուրդը ստանում է գյուղխորհրդի լիազորներից:

2. Բոլոր լիազորները պետք է գյուղխորհրդից ստանան՝

ա) Գյուղատնտեսական կամպանիայի ընթացքի հաշվառման գրքույկ.

բ) Ժամկետների տախտակը՝ վորով պետք է հավաքվեն և ներկայացվեն այս կամ այն տեղեկությունները:

3. Լիազորը պարտավոր է յուրաքանչյուր հաշվետու ժամկետից մեկ որ առաջ հարց ու փորձ անել իրեն ամրացված բոլոր տնտեսություններին և նրանից ստանալ պահանջվող տեղեկությունները, և յեթե կասկածի այդ տեղեկությունների ճշտության վրա, լիազորը պարտավոր է տեղում ստուգել այդ, քանի վոր նա (լիազորը) պատասխանատու յե գյուղխորհրդին հաղորդած ամեն մի տեղեկության ճշտության համար:

4. Գյուղխորհրդի լիազորի գյուղատնտեսական կամպանիաների ընթացքի հաշվառման գրքույկը (գյուղխորհրդների հաշվառման ձև № 17), հանդիսանում է, վորպես լիազորի հաշվետու փաստաթուղթ՝ գյուղխորհրդի առաջ. վորևէ այլ ձև լիազորը չի լրացնում՝ այլ ուղղակի գյուղխորհրդին է ներկայացնում այն գրքույկը, վորի մեջ նա մտցրել է իրեն ամրացված տնտեսությունների հաշվետու ժամկետի համար հարկավոր տեղեկությունները՝ իր ստորագրությամբ: Բոլոր տնտեսություննե-

րի վերաբերյալ ընդհանուր գումարները գրքույկի մեջ հաշվում է գյուղխորհրդի քարտուղարը:

5. Բացի այդ, լիազորը պարտավոր է ցանքսը վերջանելուց հետո, ցանված տարածությունները ճիշտ հաշվի առնելու համար կազմել տնտեսատերերի ցուցակը—«գյուղխորհրդի հաշվառման № 17-ա ձևով, որոնք կցվում են լիազորի գրքույկին, այսինքն՝ ոչ միայն հարցնել բոլոր տնտեսություններին—նրանց ցանքսի մասին և այդ մասին հաղորդել գյուղխորհրդին, ինչպես նա այդ պետք է անի ցանքսի ընթացքի ժամանակ, այլ յուրաքանչյուր տնտեսության նա պետք է գրանցի ամեն մի կուլտուրայի ցուցակում և տնատիրոջ ստորագրության հետ ներկայացնի գյուղխորհրդին: Տնտեսությունների ցուցակի կազմելը բավականին դժվար գործ է, և այստեղ գյուղխորհուրդը պարտավոր է օգնել լիազորներին՝ առանձնացնելով հատուկ մարդկանց (օրինակ՝ յոթնամյակների, կամ գյուղերի դպրոցների բարձր խմբի աշակերտներին, կոմյերիտմիության ակտիվին և այլն), այն հաշվով, որպեսզի տնտեսատերերի ցուցակի մեջ մտցվեն բոլոր տնտեսությունները և մանրամասն տրված լինեն բոլոր տեղեկությունները:

Հաշվառման յենթակա յեն առանց բացառության ամբողջ ցանված տարածությունները՝ ինչպես դաշտում, նույնպես և տնատեղում:

Յուրաքանչյուր տնատեր (մենատնտես թե կոլտնտեսական) կամ հիմնարկություն, որն ունի ցանքեր, լիակատար պատասխանատու յեն տնատերերի ցուցակի միջի տեղեկությունների ճըշտության համար և սխալ տեղեկություններ տալու դեպքում հանցավորները պատասխանատու յեն, որպես խորհրդային կառավարության խաբողներ:

Գյուղատնտեսության վերաբերյալ լրացուցիչ հատուկ հաշվետվության հրահանգը շրջհողբաժինների կողմից կուղարկվի միայն այն գյուղխորհրդներին, որոնք պարտավոր են այդ լրացուցիչ հաշվետվությունները ներկայացնելու:

(Հաշվետվության ներկայացնելու ժամկետների տախտակը տես յերես 52—54):



# 3-ՐԴ ԲԱԺԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ

## ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Ձեվ № 15.—«Բնակչության միջոցների մոբիլիզացիայի հաշվետվություն»:

Այս ձևը պետք է կազմել ամսական 3 անգամ (առ 1-ը, 11-ը և 21-ը) աճող թվերով՝ սկսած յուրաքանչյուր հաշվետու յեռամսյակի սկզբից: Հետևապես, յեռամսյակի 1-ին հաշվետվության մեջ մտցվում են առաջին տասնօրյակի գանձումները, յերկրորդում՝ քսանօրյակի, յերրորդում և ամբողջ ամսվա գանձումները և այլն, այսպես մինչև յեռամսյակի վերջը: Առանձին վճարումներով գանձված գումարները հաշվետվության մեջ մտցնելու համար ինչպես ընդհանուր գումարով, նույնպես և տվյալներն ըստ առանձին սոցիալական խմբի պետք է վերցնել դրամական մուտքերի օրագրերի «յեռամսյակի սկզբից» տողից: («Գյուղխորհրդների հաշվառում»—Ձեվ № 23):

Ձեվ № 18.—«Հաշվետվություն գյուղհարկի հաշվարկման և գանձման մասին տնտեսությունների բոլոր կատեգորիաների գծով և գյուղհարկի ու ինքնահարկման պարտքերի մասին»:

№ 18 հաշվետվությունը կազմվում է տարեկան 3 անգամ:

Հաշվետվությունը կազմելու և ներկայացնելու ժամկետները կսահմանվեն գյուղհարկի օրենքը հրապարակվելուց հետո:

Հաշվետվության մեջ տնտեսությունների թվի մասին յեղած տվյալները մտցվում է միայն առաջին ժամկետում:

Առաջին և 2-րդ տողերում գրվում է տնտեսությունների թվի մասին յեղած տվյալները և վճարման ծանուցագրերը հանձնելու մոմենտին գյուղհարկի հաշվարկված գումարը: Այդ տվյալները վերցվում է № 4-բ և № 4-գ ոժանդակ գումարային ցուցակներից, ըստ որում այդ ցուցակներում մտցրված հետագա ուղղումները (մենատնտեսի կոլխոզ մտնելու հետևանքով, բողոքների հետևանքով կատարված ուղղումները և այլն) հաշվի չեն առնվում: Այսպես օրինակ՝ յեթե գյուղխորհրդում հաշված և № 4-վ ցուցակում գրված են 100 տնտեսություն մենատնտես, որոնցից 30-ը ծանուցագրերը հանձնելուց հետո մտել են կոլխոզ, ապա հաշվետվության առաջին տողում ցույց է տրվում առաջին անգամ հաշվարկված տնտեսությունների թիվը այսինքն՝ 100, և ոչ թե 70: Ճիշտ նույն ձևով էլ հաշվարկված հարկի

գումարը 3-րդ տողում ցույց է տրվում այն չափով, վորով նա առաջին անգամ հաշվարկված է այդ տնտեսությունների վրա, այսինքն՝ առանց այն վերահաշվարկի, վորը կատարվել է տնտեսությունները կոլխոզ մտնելու կապակցությամբ:

Հարկի հաշվարկված գումարը 3-րդ տողում ցույց է տրվում մինչև արտոնություններ տալն և զեղչեր կատարելը (այդ թվում անաշխատունակության համար տրված զեղչերը) անցյալ տարիների ապառքների հետ միասին: Հաշվետվության 4-րդ տողում ապառքների այդ գումարը ցույց է տրվում առանձին:

Հաշվետվությունը ներկայացնելու ամբողջ ընթացքում 3-րդ և 4-րդ տողերում ցույց տրված գումարը մնում է անփոփոխ, իսկ մնացած բոլոր տողերի տվյալները ցույց է տրվում աճող գումարներով:

2-րդ տողում ցույց է տրվում հաշվետու ժամկետի տնտեսությունների թիվը, այսինքն հաշվի առնելով այն բոլոր փոփոխությունները (հայտնաբերում, կոլխոզ մտնել և այլն), վորոնք կատարվել են վճարման անդորրագրերը հանձնելուց հետո մինչև № 18 ձևի կազմելը կատարված փոփոխությունները:

5-րդ տողում գրվում է հարկի վերահաշվարկված այն գումարը, վորը լրացուցիչ հաշվարկված է կամպանիայի սկզբից մինչև հաշվետվության կազմելը:

6-րդ սունյակում ցույց է տրվում ինչպես հարկի հաշվարկման, այնպես էլ նրանից հետո մինչև հաշվետվության կազմելը տրված արտոնությունների գումարը: Բացի դրանից այդ գումարի մեջ մտցրվում են բոլոր տեսակի փոփոխությունները (բողոքների, վերահաշվարկի, մենատնտեսների կոլխոզ մտնելու կապակցությամբ և այլն), վորոնք կատարվել են կամպանիայի սկզբից մինչև հաշվետվության կազմելը:

7-րդ տողում ցույց է տրվում գյուղհարկի այն գումարը, վորը յենթակա չե վճարման տվ. հաշվետու օրը: Այդ գումարը ստացում է յերրորդ և հինգերրորդ տողերի գումարից, հանելով 6-րդ տողում ցույց տրված արտոնությունների գումարը:

8-րդ տողում ցույց է տրվում միջոցների մոբիլիզացիայի հաշվետվությամբ ցույց տրված հարկերի այն գումարը, վորը մուտք է յեղել կամպանիայի սկզբից մինչև հաշվետու ժամկետը:

9-րդ տողում պետք է ցույց տալ կամպանիայի սկզբից մինչև հաշվետվության օրը իրացված գույքի արժեքը, վորոնց



դիմաց ստացվելիք փողը դեռևս մուտք չի յեղել (այսինքն այն գույքը, վորը վաճառված է հարկի վճարման ժամկետն անցնելու դիմաց, կամ բոլորովին չի իրացված): Գույքի իրացումից ստացված գումարներն այստեղ ցույց չի տրվում, վորովհետև այդ գումարները մտնում են մուտքերի ընդհանուր գումարների մեջ (8-րդ տող):

10-րդ տողում ցույց է տրվում գյուղհարկի այն գումարը, վորը մինչև հաշվետու ժամկետը չի վճարված՝ անցյալ տարիների ապառքների հետ միասին: Այդ գումարը կազմվում է 7-րդ տողում («յենթակա յե վճարման») ցույց տրված գումարի և 8-րդ տողում («ընդամենը մուտք դրամով») և 9-րդ տողում («ապահոված գույք») ցույց տրված գումարների տարբերությունից:

Հետեվյալ 11-րդ տողում ցույց է տրվում գյուղհարկի անցյալ տարիների ապառքների գումարը առանձին:

12-րդ տողում ցույց է տրվում ինքնահարկումից մնացած ապառքները: Այդ դեպքում մինչև ընթացիկ տարվա ինքնահարկման գումարների վճարման առաջին ժամկետն անցնելը՝ ցույց է տրվում միայն նախորդ տարվա ապառքները: Վճարման վերջին ժամկետն անցնելուց հետո ինքնահարկման ապառքների գումարը ցույց է տրվում ընդհանուր գումարով՝ անցյալ տարիների և ընթացիկ տարվա համար:

Հաշվետու բոլոր տվյալները պետք է անպայման բաժանված լինեն ըստ վճարողների առանձին կատեգորիաների: Տնտեսություններն անհատական կարգով հարկադրելու և այդ տնտեսություններն ըստ հարկման հատկանիշների բաժանելու մասին տվյալները գյուղխորհուրդը հայտնում է շրջգործկոմի կողմից հաստատված կուլակային տնտեսությունների ցուցակի հիման վրա: Այդ տվյալները բացի 1-ին տողում «հարկված է ըստ հաշվետվության» տվյալների տրվում է աճող գումարներով:

Ապառքների մասին տվյալները վերցվում է ապառքատետրերի ցուցակներից (գյուղխորհրդի հաշվառում, Ձեվ № 24):

Ձեվ № 19.—Կուլտհարկի հաշվարկման և գանձման մասին հաշվետվությունը տնտեսությունների բոլոր կատեգորիաների գծով՝ կազմվում է № 18 ձևի նման, այն տարբերությամբ միայն, վոր կազմվում է վոչ թե տարեկան 3, այլ 2 անգամ:

Ձեվ № 21.—№ 21 հաշվետվությունը փոխատվության բաժանորդագրության ընթացքի մասին գյուղխորհրդները ներկայացնում են խնայդրամարկղին գյուղական բնակչության մեջ փոխա-

ուԹյան տարածման պայմանների ու կարգի մասին յեղած հրահանգով՝ խիստ կերպով վորոշված ժամկետներում: Հաշվետու ձևում ցույց ե տրվում բաժանորդների քանակն ու բաժանորդագրության գումարը.—

ա) ըստ յուրաքանչյուր կոլխոզի, բ) մենատնտեսների մեջ և գ) գյուղխորհրդից՝ գյուղական բյուջեյի հաշվին աշխատավարձ ստացող բանվոր-ծառայողների մեջ:

Կոլտնտեսականների ու մենատնտեսների գծով այդ տեղեկությունները կազմելու համար հիմք են ծառայում բաժանորդագրության գումարների մուծումների հաշվարկային տեղեկագրերը (գյուղխորհրդի հաշվառում Ձև № 53):

Հաշվետվությունը № 21 ձևով առաջին անգամ կազմվում ե հետևյալ ձևով.—յուրաքանչյուր կոլխոզնիկի բաժանորդագրության գումարը հաշվարկային № 53 տեղեկագրում գրելուց հետո՝ գյուղխորհուրդը հաշվում ե բաժանորդների և բաժանորդագրության գումարը յուրաքանչյուր լիագորի հաշվարկային տեղեկագրով: Տվյալ կոլխոզի բաժանորդագրության հաշվառման վերաբերող հաշվարկային տեղեկագրերի գումարները հանրագումարի բերելով ստացվում ե տվյալ կոլխոզի ընդհանուր գումարն ամբողջությամբ, վորը գրվում ե հաշվետու № 21 ձևում: Հետագա բոլոր դեպքերում № 21 ձևի համար հաշվետու տվյալները կազմվում են նոր ընդհանուր գումարների հիման վրա, վորոնք ստացվում են № 53 ձևի հաշվարկային տեղեկագրերը հաշվելու միջոցով (վերևը նշված կարգով):

Աշխատավոր մենատնտեսների մեջ կատարված բաժանորդագրության գումարի տվյալներն ստացվում են մենատնտեսների № 53 ձևի բոլոր հաշվարկային տեղեկագրերը հաշվելու միջոցով:

Բանվոր-ծառայողների (գյուղական բյուջեյի հաշվին գյուղխորհրդից աշխատավարձ ստացող) բաժանորդագրության տվյալները հաշվելու համար հիմք են ծառայում գյուղխորհրդի կողմից ընդունված բաժանորդագրության թերթիկները:

№ 21 ձևով հաշվետվությունը կազմվում են յերկու որինակից, վորից մեկն ուղարկվում ե խնայդրամարկղին, իսկ մյուսը պահվում ե գյուղխորհրդում:

Ձև № 22.—«Հաշվետվություն բյուջեյի կատարման մասին»: Գյուղական բյուջեյի կատարման ամսական հաշվետվությունում պետք ե ցույց տալ ստացված յեկամուտների և կատարված ծախ-



քերի գումարները—տարվա սկզբից աճող թվերով՝ ըստ յեկամուտների և ծախքերի առանձին տեսակների (ըստ բյուջեյի անվանակարգի-կլասիֆիկացիայի՝ հատվածների, պարագրաֆների և հոդվածների): Այսպես որինակ՝ օգոստոս ամսվա հաշվետվության մեջ պետք ե ցույց տալ տարվա սկզբից 7 ամսվա տվյալները, իսկ սեպտեմբերին՝ 9 ամսվանը և այլն:

Հաշվետվություն կազմելու տվյալները պետք ե վերցնել գյուղական բյուջեյի ամսական յեկամուտների և ծախքերի տեղեկագրից («գյուղխորհրդների հաշվառում» Ձև № 27-ա և 27-բ) հաշվետվության մեջ փոխանցելով № 27-ա տեղեկագրի 5-րդ տողից «մուտք ե յեղել» և № 27-ա տեղեկագրի 8-րդ տողից «ծախսված ե տարվա սկզբից ընդհանուր գումարները»:

Այն դեպքում, յերբ գյուղխորհրդի բյուջեյում կան վարկին ինքնուրույն կերպով կարգադրող հիմնարկներ և նրանց կողմից տարվում ե բյուջետային միջոցների ծախսման ինքնուրույն հաշվառում, գյուղխորհրդի ամսական տեղեկագրերով ծախսված գումարի վրա պետք ե ավելացնել նաև վարկերի կարգադրիչների կողմից ծախսված գումարները ևս՝ նրանց կողմից ներկայացված հաշվետվությունների հիման վրա:

Գյուղբյուջեների կատարման հաշվետվությունների ճշտությունը պիտի ստուգել հետևյալ կերպ՝ հաշվետու ժամանակամիջոցի սկզբին դրամարկղում կամ ընթացիկ հաշվում յեղած մնացորդի վրա պետք ե ավելացնել հաշվետու ժամանակամիջոցում մուտք յեղած գումարները և հանել նույն ժամանակամիջոցում կատարված փաստացի ծախքերը: Սրա ստացած գումարը պետք ե համապատասխանի գյուղբյուջեյում գյուղխորհրդի դրամարկղում և ընթացիկ հաշվում ունեցած գումարներին: Մնացորդի ճշտությունը պետք ե ստուգել դրամարկղային գրքով և համեմատելով վարկային հիմնարկի (խնայդրամարկղի կամ պետբանկի) տեղեկանքների հետ:

Գյուղբյուջեյի կատարման վերաբերյալ գյուղխորհրդի դեկտեմբեր ամսվա հաշվետվությունը (աճող գումարներով—տարվա սկզբից) միաժամանակ հանդիսանում ե գյուղբյուջեյի կատարման տարեկան հաշվետվություն:

Հաշվետվությունը պետք ե ներկայացնել ամիսը մեկ անգամ՝ հաջորդ ամսվա 2-ից վոչ ուշ:

Աշխատավարձի պարտք լինելու դեպքում, գյուղխորհուրդը պետք ե պարտքի գումարը ցույց տա բյուջեյի կատարման հաշ-

վետվության մեջ յեռամսյակում մեկ անգամ (Ձեվ № 22)։ Պարտ-քը ցույց է տրվում ընդհանուր գումարով՝ բաժանելով պարտքերը ըստ գյուղատնտեսության, լուսավորության, առողջապահության և կառավարման գումարների։

Ձեվ № 23.—«Տեղական բյուջեյով պահպանվող հիմնարկների հատուկ միջոցների հաշվետվություն»։

Տեղական բյուջեյով պահպանվող հիմնարկների հատուկ միջոցների տարեկան հաշվետվությունը գյուղխորհրդները կազմում են «այլ գումարների և հաշվարկների գրքի» անձնական հաշիվների հիման վրա։

Յեթե գյուղխորհրդներն ունեն վարկերն ինքնուրույն կերպով կարգադրող հիմնարկներ և նրանց կողմից տարվում է ինքնուրույն հաշվետվություն, գյուղխորհրդի «այլ գումարների և հաշվարկների գրքով» (գյուղխորհրդ. հաշվառման Ձեվ № 28) հաշվի առնված գումարների վրա պետք է ավելացնել վարկերի կարգադրիչների կողմից ներկայացված հատուկ միջոցների հաշվետվության մեջ ցույց տված գումարները ևս։

Հատուկ միջոցների տարեկան հաշվետվությունը պետք է ներկայացնել տարեկան մեկ անգամ, բյուջեյի դեկտեմբեր ամսվա հաշվետվության հետ միասին։

Ձեվ № 24.—«Հաշվետվություն պարտադիր կոլարային ապահովագրության վճարումների հաշվարկման և մուծման մասին»։

Պետական կոլարային ապահովագրության հաշվարկման և վճարումների մուծման վերաբերյալ 1936 թ. հաշվետվությունն ըստ վճարողների կատեգորիաների՝ կազմում են գյուղխորհրդները, առ 1-ն հունվարի, և 1-ն հոկտեմբերի տվյալներով։

Առաջին տողում պետք է ցույց տալ նախապես հաշվարկված գումարը (նախքան արտոնություններ տալը) և անցյալ տարիների հետնուրդը։

Յերկրորդ տողում պետք է ցույց տալ ապահովագրական վճարումների հաշվարկված գումարներն, որոնք ցույց են տրված «գյուղխորհրդների հաշվառման» № 23 ձեվում։

Յերրորդ տողում պետք է ցույց տալ հաշվարկի պահին և նրանից հետո տրված զեղջերի և արտոնությունների ամբողջ գումարը։

Չորրորդ տողում ցույց է տրվում գանձման յենթակա գումարը այսինքն՝ առաջին տողի հաշվարկված և յերկրորդ տողի առ հաշվարկված գումարները պետք է միացնել և ստացված գումարից հանել 3-րդ տողի արտոնություն և զեղջերի գումարը։

5-րդ տողում պետք է գրել կոլարային ապահովագրության գանձած գումարների տվյալները «մուտքերի օրագրերի հիման վրա («գյուղխորհրդի հաշվառում» Ձեվ № 23)։

Այդ գումարները պետք է լրիվ չափով համապատասխանեն այն գումարներին, որոնք ցույց են տրված միջոցների մոբիլիզացիայի հաշվետվությունում (գյուղխորհրդի հաշվետվության № 15 ձեվով։

Ձեվ № 25.—«Պարտադիր կոլարային ապահովագրություն»։

Ձեվ № 25-ը լրացնելու կարգի մասին Համամիութենական ֆինժողկոմատի կողմից կհայտնվի տեղերին, համապատասխան ցուցմունքները հրապարակվելուց 1936 թ. հաշվետվությունների ձեվերը հաստատելուց հետո։

Գյուղխորհրդի բանվոր-ծառայողներից գանձված յեկամտահարկի և կուլտհարկի մասին հաշվետվություն կազմելու համար գյուղխորհրդները շրջֆինբաժնին ուղարկում են աշխատավարձի վճարման տեղեկագրերի պատճենները (գ.-խ.-ի հաշվետվության Ձեվ № 31)։ Ուղարկելու ժամկետները կսահմանվեն ԽՍՀՄ ֆինժողկոմատի կողմից լրացուցիչ կերպով։

## 4-ՐԴ ԲԱԺԻՆ ՄԹԵՐՈՒՄՆԵՐ

Ձեվ № 26.—«Ամփոփում այն անտեսությունների մասին, որոնք կաթի, յուղի և մսի հանձնման իրենց պարտավորությունները չեն կատարել ժամկետին»։

Ամփոփումը պետք է կազմել 3 օրինակից՝ յուրաքանչյուր մթերքի համար առանձին (կաթի, յուղի և մսի համար առանձին-առանձին)։

Յեթե ամփոփումը ներկայացվում է մսի համար, պետք է Ձեվի վերնագրի «կաթ և յուղ» բառերը ջնջել, յեթե ամփոփումը տրվում է կաթի համար այդ դեպքում պետք ջնջել «յուղ» և «միս» բառերը, իսկ յեթե ամփոփումը յուղի մասին է, պետք է ջնջել «կաթ» և «միս» բառերը։

Կաթի և յուղի ամփոփումները պետք է ուղարկել ժողկոմխորհին կից մթերումների կոմիտեյի ՀՍԽՀ լիազորին ամեն ամսի՝ հաջորդ ամսվա 5-ից վոչ ուշ։

Կաթի և յուղի ամփոփման համար տեղեկությունները պետք

և վերցնել կաթի և յուղի հանձնման իրենց պարտավորությունները ժամկետին չկատարած տնտեսությունների ցուցակի ընդհանուր գումարներից («գյուղխորհրդի հաշվառում»—Ձեվ № 43)։

1-ին սունյակում պետք է թվել այն կոլտնտեսությունները և կաթնատնտ. ապրանքային ֆերմաները, վորոնք իրենց պարտավորությունները չեն կատարել ժամկետին։

3-րդ սունյակում, պարտավորությունների № №-ը պետք է դրել միայն կոլտնտեսությունների և կաթնատնտ. ապրանքային ֆերմաների դիմաց, իսկ կոլտնտեսականների, մենատնտեսների և կուլակների դիմաց, պարտավորությունների №№-ը չեն նշանակվում։ Մնացած սունյակների համար տեղեկությունները պետք է վերցնել «գ.-խ. հաշվառման» № 43 ձևի համապատասխան սունյակների ընդամեն տվյալներից։ Կաթի և յուղի ամփոփման 7-րդ սունյակը բոլորովին չի լրացվում։

Մսի վերաբերյալ ամփոփումը ԺԿԽ-ին կից մթերումների կոմիտեյի շրջ. լիազորին է ուղարկվում յեռամսյակը մեկ անգամ՝ հաջորդ յեռամսյակի առաջին ամսվա 5-ից վոչ ուշ։

Մսի վերաբերյալ ամփոփման համար տեղեկությունները պետք է վերցնել մսի հանձնման պարտավորությունները ժամկետին չկատարած տնտեսությունների ցուցակի ընդամեն տվյալներից։

(«Գ.-խորհրդների հաշվառման» Ձեվ № 40)։

1-ին սունյակում նշվում են այն կոլտնտեսություններն ու կաթնատնտ. ապրանքային ֆերմաները, վորոնք մսի հանձնման իրենց պարտավորությունները չեն կատարել ժամկետին. 3-րդ սունյակում յուրաքանչյուր կոլտնտեսության և կաթնատնտ. ապրանքային ֆերմայի դիմաց պետք է նշել պարտավորությունների №№-ը։ 2-ից մինչև 8-րդ սունյակը (ներառյալ) ամփոփումների համար տեղեկությունները պետք է վերցնել «Գյուղխորհրդների հաշվառման» № 40-ա ձևից։

Ձեվ № 27.—«Ամփոփում՝ պետության բրդի հանձնման իրենց պարտավորությունները ժամկետին չկատարած տնտեսությունների մասին»։

Ամփոփումը պետք է լրացնել տարին 2 անգամ և ներկայացնել ԺԿԽ-ին կից մթերումների կոմիտեյի շրջ. լիազորին հարկ վճարողների կողմից բրդի հանձնման համար սահմանված ժամկետը լրանալուց 5 որ հետո։

Այս ձևի համար տեղեկությունները պետք է վերցնել



«բրդի հանձնման իրենց պարտավորությունները ժամկետին չկատարած տնտեսությունների ցուցակի (Գ.-խ. հաշվառման Ձեվ № 45) ընդհանուր գումարներից։

1-ին սունյակում պետք է գրել այն կոլտնտեսություններն ու վոչխարաբուծական ապրանքային ֆերմաները, վորոնք իրենց պարտավորությունները չեն կատարել ժամկետին։

2-րդ սունյակում պարտավորությունների №№-ը նշվում են միայն կոլտնտեսությունների և վոչխարաբուծական ապրանքային ֆերմաների դիմաց, իսկ կոլտնտեսականների, մենատնտեսների և կուլակների համար պարտավորությունների №№-ը չեն գրվում։ 3-ից մինչև 10 (ներառյալ) սունյակների համար տեղեկությունները պետք է վերցնել «Գ.-խ. հաշվառման» № 45 ձևի համապատասխան սունյակներից։

11-րդ սունյակում (պետք է մթերվի բնաբերքով) պետք է կրկնել այն քանակը, վորը ցույց է տրված 10-րդ սունյակում, իսկ անփոփման 12-րդ սունյակի համար պետք է տեղեկություններ վերցնել «Գ.-խ. հաշվառման» № 45 ձևից (նույնպես 12-րդ սունյակից)։

Գյուղխորհրդի հաշվառում Ձեվ № 37 «Հացահատիկային կուլտուրաների արևածաղկի, բրնձի և կարտոֆիլի հանձնման պարտավորությունները ժամկետին չկատարող տնտեսությունների ցուցակ»։

Տեղեկանքը կազմվում է 2 որինակից միայն մենատնտեսների մասին (կոլխոզներից բռնագանձվելիք քանակի մասին հայտնում է ԺԿԽ-ին կից մթերումների կոմիտեյի շրջ. լիազորն) յուրաքանչյուր 5 որը մեկ անգամ և ուղարկվում է մեկ որինակը ԺԿԽ-ին կից մթերումների կոմիտեյի շրջ. լիազորին, իսկ մյուսը մնում է գյուղխորհրդում։ 7-րդ սունյակը չի լրացվում (այդ սունյակում շրջ. լիազորը նշումներ է կատարում բռնագանձման մասին)։

Ձեվ № 28.—«Պարտավորությունների թերակատարման (բնաբերքով) և դրամական տուգանքներն անվիճելի կարգով գանձումների ամփոփում»։

Ամփոփումը պետք է կազմել գյուղատնտեսական արտադրանքի յուրաքանչյուր տեսակի՝ ա) հատիկային, բ) արևածաղկի, գ) բրնձի, դ) կարտոֆիլի, ե) յուղի, կաթի, զ) մսի և է) բրդի համար առանձին։ Մթերքների անունը գրվում է բլանկի վերին մասում, ձևի վերնագրի տակ։

Հատիկային արտադրանքի՝ բրնձի, արևածաղկի, յուղի, կա-

թի և կարտոֆիլի վերաբերյալ ամփոփումները պետք է ներկայացնել ՍՍՀՄ ԺԿԽ-ի մթերման կոմիտեի շրջլիազորին՝ յուրաքանչյուր ամսվա համար, յուրաքանչյուր ամսի 1-ի դրությամբ։ Մսի համար յուրաքանչյուր եռամսյակի առաջին օրվա դրությամբ, իսկ բրդի համար տարեկան կամպանիան վերջանալուց հետո։

Անվիճելի կարգով կատարվող գանձումների տեղեկագիրը ներկայացվում է հաշվետու ժամկետն անցնելուց 5 օր հետո, բոլոր մթերումների համար, իսկ բրդի համար կամպանիան ավարտելուց 5 օր հետո։

Ամփոփման մեջ պետք է ցույց տալ գանձումների (դրամով և բնամթերքով) քանակն ու չափը՝ ըստ տնտեսությունների առանձին կատեգորիաների, այսինքն ցույց տալ կոլտնտեսականների, մենատնտեսների, կուլակների, տուգանված տնտեսությունների թիվը՝ առանձին-առանձին։ Կոլտնտեսություններն ու կոլտնտեսային ապրանքային ֆերմաները պետք է ամփոփման մեջ գրված լինեն յուրաքանչյուրն առանձին։

«Գանձման ենթակա է» սյունակում (դրամով և բնամթերքով) պետք ցույց տալ տուգանումների ընդհանուր գումարը՝ հարկատուներից կամպանիայի սկզբից մինչև հաշվետու ժամկետը, այսինքն հատիկեղենի համար հուլիսի 1-ից, մսի համար հունվարի 1-ից և այլն։

«Փաստացի գանձված է» սյունակում ցույց է տրվում մուծված տուգանքների գումարը մսի, կամ բրդի համար հաշվետու ժամկետում՝ կամպանիայի սկզբից հաշված — այսինքն կաթի և մսի համար հունվարի մեկից, իսկ հատիկեղենի, արևածաղկի, կարտոֆիլի և բրնձի համար՝ հուլիսի 1-ից։

Տեղեկագիրը կազմելու համար տվյալները պետք է վերցնել ժամկետին իրենց պարտավորությունները չկատարած տնտեսությունների ցուցակներից՝ հատիկային կուլտուրաների, արևածաղկի, բրնձի և կարտոֆիլի համար № 37 ձևից (բացի դրանից կոլխոզներին վերաբերող տվյալները վերցվում է ԺԿԽ-ին կից մթերումների կոմիտեի շրջլիազորին հանձնածից)։

Կաթի և յուղի տվյալները պետք է վերցնել կաթի և յուղի հանձնման պարտավորությունները ժամկետին չկատարած տնտեսությունների ցուցակից («Գ. խ. հաշվառման» Ձև № 43)։

Մսի տվյալները պետք է վերցնել մսի հանձնման պարտավորությունները ժամկետին չկատարած տնտեսությունների ցու-



ցակի ընդամեն գումարներից («Գ. խ. հաշվառում» Ձև № 40-ա), իսկ բրդի տվյալները պետք է վերցնել՝ բրդի հանձնման պարտավորությունները ժամկետին չկատարած տնտեսությունների ցուցակի ընդամեն գումարից («Գ. խ. հաշվառում» Ձև № 45)։

## 5·ՐԴ ԲԱԺԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

### ՁԵՎ № 29 «ԱՄՓՈՓՈՒՄ ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ»

Ամփոփումը կազմում է թոշակառուների գյուղական հանձնաժողովի նախագահը, կամ նախագահի օգնականը և հետևյալ հաշվետու տարվա հունվարի 15-ին ներկայացնում սոցիալական ապահովության շրջանային տեսչությանը։

Հաշվետվությունը պետք է կազմել ամբողջ տարվա ընթացքում գյուղական հանձնաժողովների կողմից քննված գործերի և դրանց նկատմամբ կայացված վորոշումների քանակի հիման վրա, վորոնք գրանցված են հանձնաժողովի գործերում։

Հաշվետվության 1—4 սյունակներում պետք է գրել քննված գործերի թիվը՝ ըստ հանձնաժողովի ընդունված վորոշումների բնույթի։

Ձևի վերջին կետում պետք է ցույց տալ հաշվետու տարվա վերջին ամսում գյուղխորհրդում յեղած թոշակառուների ընդհանուր թիվը։

Թոշակառուների քանակը վորոշելու համար պետք է հաշվել ապահովագրվածների վերաբերյալ գյուղխորհրդում յեղած անձնական քարտերը («գյուղխորհրդում հաշվառման» Ձև № 49)

## 6-ՐԴ ԲԱԺԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ձև № 30.—«Քաղաքացիական կեցության ակտերի յերկրորդ օրինակների ցանկ»։ Ցանկը, քաղաքացիական կեցության ակտերի յերկրորդ օրինակի հետ միասին, («գյուղխորհրդների հաշվառում Ձև №№ 5, 6, 7 և 8) պետք է ներկայացնել ՆԳԺԿ-ի վարչությունը (Զագսի բաժին) հաշվետու ամսվա հաջորդ ամսվա 2-ից վոչ ուշ։ Տվյալ ցանկում ցույց տված ակտային գրանցումների համարները պետք է ճշտորեն համապատասխանեն ակտային գրքում նշված այդ գրանցումների համարներին։

Ակտային գրքում ակտերի համարակալումը պետք է կատարել յուրաքանչյուր տեսակ ակտի համար առանձին (ծնունդ, մահ-

ամուսնություն և այլն) և պետք է լինեն հետևողական ու անընդմիջվող ամբողջ տարվա ընթացքում՝ հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ: Յեթե տվյալ ամսում այս, կամ այն ակտերի գրանցում չի յեղել, այդ դեպքում ցուցակի մեջ պետք է լինի դրա մասին նշում՝ «ամուսնության գրանցում չի յեղել», կամ «մահվան գրանցում չի յեղել» և այլն:

## 7-ՐԴ ԲԱԺԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ձև № 31.—«Հաշվետվություն ճանապարհային աշխատանքների և բնակչության աշխատանակցության պլանի կատարման մասին»:

ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1936 թ. հունվարի 29-ի վորոշմամբ միության բոլոր գյուղխորհրդների համար սահմանված է հաշվետվության միասնական ձև ճանապարհային շինարարության պլանի կատարման մասին, այդ պատճառով էլ հաշվետվության այլ ձևեր ճանապարհա-շինարարության գծով չի թույլատրվում գործածել:

Հաշվետու քարտը լրացնում է գյուղխորհրդի ճանապարհային լիազորը և ստորագրելով գյուղխորհրդի նախագահի հետ միասին ներկայացնում է համապատասխան շրջանային ճանբաժնին այն հաշվով, վոր ճանբաժինն հաշվետվությունն ստանա հաշվետու ամսվան հաջորդող ամսի 5-ից վոչ ուշ:

Հաշվետու քարտը կազմված է հետևյալ 6 բաժիններից՝

1. Մթերված և տեղափոխված է նյութ
2. Կատարված է աշխատանք
3. Աշխատանքային մասնակցություն
4. Դրամական միջոցների շարժումը
5, Ճանապարհային աշխատողների անձնական կազմը
6. Ճանապարհային գործիքների քանակը:

1-ին բաժինն ունի 7 սունյակ (հարցեր) և իր մեջ ամփոփում է ճանապարհների կառուցման և վերանորոգման համար անհրաժեշտ նյութերի մթերման և տեղափոխման տեղեկությունները: 1, 3, 6 սունյակներում ցույց է տրվում թե քանի խորանարդ մետր քար, խիճ, շպալ և անտառանյութ է մթերված, իսկ 2, 4 և 5 սունյակներում՝ քանի խորանարդ մետր տեղափոխված է աշխատանքի վայրը, ըստ վորում տվյալներն ամսե-ամիս տրվում է աճող գումարներով. որինակ՝ հունվարին (առ 1-ն փետրվարի) մթերված է 250 խորանարդ մետր քար, տեղափոխված է 120 խ. մետր, իսկ փետրվարին՝ մթերված է 300 խ. մետր, տեղափոխված է 180 խ. մ. հետևաբար հաշվետու քարտի 2-րդ սունյակում առ 1-ն մարտի ցույց պետք է տալ 250 ավելացրած 300 հավասար է 550 խորանարդ մետր, իսկ 3-րդ սունյակում 180 ավելացրած 120 հավասար է 300 խորանարդ մետր:

2-րդ բաժինն ունի յերեք մաս՝ ա) «Նոր շինարարություն», բ) «Հիմնական վերանորոգում» և գ) «Ընթացիկ վերանորոգում»:

Այս բաժնի 9-րդ սունյակում պետք է ցույց տալ թե քանի խորանարդ մետր հողային աշխատանք է կատարված ինչպես մեծ հողաթմբեր, պատնեշներ, ջրատար առուներ և այլ կառույցելիս, այնպես էլ բանող ճանապարհների և արհեստական կառուցումների շինարարության ժամանակ:

10, 11, 12, 13, 14, 15 և 16 սունյակներում ցույց պետք է տալ միայն ավարտված աշխատանքները, այսինքն ճանապարհի յերթևեկման համար պատրաստ մասը կիլոմետրերով, կամ պատրաստ արհեստական կառուցվածքը՝ գծային մետրերով, այս տվյալները նույնպես պիտի ցույց տալ տարվա սկզբից՝ աճող գումարներով:

17-րդ սունյակում ցույց է տրվում ծառատնկված ճանապարհների յերկարությունը կիլոմետրերով:

18-րդ սունյակում ցույց է տրվում ճանապարհների վրա դրված կիլոմետրային սյուների, իսկ 19-րդում ցուցիչ նշանների քանակը:

20-րդ սունյակում պետք է ցույց տալ այն ճանապարհների քանակը, վորոնք հատուկ ակտերով ամրացված, կամ հանձնված են առանձին գյուղերին, կոլտնտեսություններին, խորհտնտեսություններին, ՄՏԿ-ներին և այլն՝ անմիջական հսկողության ընթացիկ վերանորոգման և պահպանման համար:

Այդ տվյալները ցույց է տրվում բոլոր կարգի ճանապարհների համար, իսկ հետո ներքևում առանձին ցույց է տրվում, թե ինչպիսի ճանապարհ է կառուցված ու վերանորոգված յերեք բարձր կարգի ճանապարհների գծով:

3. 3-րդ բաժնում՝ «Աշխ. մասնակցությունը» ցույց է տրվում աշխատած մարդորերի և սայլորերի քանակը բոլոր կարգի ճանապարհների համար (ստորին ցանցը գումարած բարձր կարգի ճանապարհները) այդ թվում առանձին-առանձին ըստ ՄՏԿ-ների, կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների, մենատնտեսների և կուլակային տնտեսությունների:

6-րդ սունյակում ցույց է տրվում թե գործադրված աշխատանքների ընդհանուր քանակից (1-ին տող) ինչքան է ծախսված 3 բարձր կարգի ճանապարհների վրա։

22, 23, 24 և 25-րդ սունյակներում աշխատած մարդօրերի և սայլօրերի թիվը ցույց է տրվում աճող գումարով՝ տարվա սկզբից։ Օրինակ՝ Աշտարակի գյուղխորհուրդը հունվար ամսին օգտագործել է 200 մարդօր և 100 սայլօր, իսկ փետրվար ամսին 300 մարդօր 200 սայլօր և 5 տրակտորօր։ Հետևաբար շրջ. ճանբաժնին ուղարկվելիք հաշվետու քարտի մեջ առ 1-ն մարտի 23-րդ սունյակում կլինի 200 գումարած 300 հավասար է 500 մարդօրեր, 24-րդ սունյակում 100 գումարած 200 հավասար է 300 սայլօրեր և 25-րդ սունյակում 5 տրակտոր օրեր։

4. Չորրորդ բաժնի 26 և 27-րդ սունյակներում գրվում է այն մուծումների գումարը, որ հավաքված է ճանապարհային աշխ. մասնակցությունից այս կամ այն պատճառով ազատված տնտեսություններից։ 28-րդ սունյակում գրվում է աշխ. մասնակցությունից խուսափողներից գանձված տուգանքների գումարը. 29-րդ սունյակում գրվում են ճանապարհային շինարարության և նորոգումով շահագրգռված տնտեսական կազմակերպություններից ստացված միջոցները։ 30 և 31-րդ սունյակներում ցույց են տրվում գյուղական և շրջանային բյուջեներից ճանապարհաշինարարության համար հատկացված միջոցները առանձին ապարատի պահպանման և առանձին աշխմասնակցության կազմակերպման համար։

32-րդ սունյակում ցույց է տրվում տարվա սկզբից մինչև հաշվետու ամսվա վերջը ծախսված գումարները բոլոր մուտքերից։

4-րդ բաժնի (դրամական միջոցների շարժումը) տեղեկությունները պետք է վերցնել հետևյալ փաստաթղթերից՝

ա) Հիմնական արտադրական ցուցանիշների, պետական պարտավորությունների կատարման հաշվառման տնտեսության գիրք «գյուղխորհրդների հաշվառում» Ձև № 2 և 3)։

բ) Գյուղական բյուջեյի և յեկամուտների ու ծախքերի տեղեկագրից («Գ. խ. հաշվառում» Ձև № 27-ա 27-բ)։

5. Հինգերորդ բաժնի 33, 34, 35-րդ սունյակներում ցույց է տրվում կոլխոզների ճանապարհային լիազորների անձնակազմը, կոլխոզների մշտական ճանապարհային բրիգադաների բրիգա-



դիրները և գյուղական ճանապարհային լիազորները յեռամսյակներով առ 1-ն ապրիլի, հուլիսի, հոկտեմբերի և հունվարի։

Այդ տեղեկությունները պետք է վերցնել գյուղխորհրդների հաշվարի արձանագրությունների գրքից («գյուղխորհրդների հաշվառում» Ձև № 50) և կոլխոզների վարչություններից։

6. Վեցերորդ բաժնի 37-րդ սունյակում ցույց է տրվում ճան. գործիքների քանակը յեռամսյակներով։ Այդ տեղեկությունները պետք է վերցնել գույքացուցակներից («գյուղխորհրդների հաշվառում» Ձև № 30)։

Հաշվետվությունները կազմելիս պետք է ի նկատի ունենալ հետևյալը՝

7. Նյութերի մթերման, ինչպես և բարձր կարգի, միայն աշխ. մասնակցության ուժերով կատարված ճանապարհային աշխատանքների համար կազմվում է ինքնուրույն հաշվետվություն։

8. 1936 թ. համար հաստատված հաշվետվության ձևերում տարեկան առաջադրանքի (պլանի) գրանցման համար սունյակներ չկան, որովհետև շրջգործկոմի կողմից հաստատված աշխատանքների պլանը պետք է լինի գյուղխորհրդներում և տարվա ընթացքում այն փոփոխվել չի կարող։ Այդ պատճառով էլ տարեկան պլանը հաշվետվության ամսական քարտի մեջ մտցնելու կարիք չկա։

9. Նյութերի մթերման ու տեղափոխման սունյակները (1-ին բաժնի) պետք է լրացնել աշխատանքի ղեկավարի տվյալների հիման վրա (տաբել, Ձև № 47 «ինչպիսի աշխատանք է կատարված» 1—3 տողեր) և ըստ աշխատանքների փաստացի կատարման («տաբել»-ի 9-րդ բաժնի 9—18 տողերը)։

Աշխմասնակցության մասին տվյալները (3-րդ բաժին) վերցվում է նույնպես տաբելից «ընդամենը կատարված է» բաժնից։

## 8-ՐԴ ԲԱԺԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ձև № 32.—«Աշխատողների թվի և աշխատավարձի ֆոնդի ծախսման հաշվետվություն»։

1. Հաշվետվությունը ներկայացվում է շրջգործկոմին յեռամսյակում մեկ անգամ, հաշվետու յեռամսյակը վերջանալուց հետո՝ 10 օրից ոչ ուշ։

Առաջին և յերկրորդ սունյակներում պետք է ցույց տալ գյուղխորհրդի բոլոր, թե մշտական և թե ժամանակավոր աշխա-

տողներին, անկախ նրանից թե ինչպիսի միջոցներով են նրանք պահվում։

2. Առաջին սյունակում պետք է ցույց տալ հաշվետու յեռամսյակի առաջին ամսի 1-ին, գյուղխորհրդի ցուցակներ յեղած աշխատողների թիվը, իսկ յերկրորդ սյունակում՝ հաշվետու յեռամսյակի վերջին որում յեղածների թիվը։

3. Յերրորդ սյունակի համար աշխատավարձի վերաբերյալ տեղեկությունները պետք է վերցնել հաշվետու յեռամսյակի ընթացքում գյուղխորհրդի աշխատողներին բոլոր տեսակի միջոցներով (բյուջեյով, հատուկ միջոցներով և այլն) վճարված աշխատավարձի փաստաթղթերից։

Աշխատավարձի կազմի մեջ աշխատած ժամանակի վարձատրության հետ միասին (սովորական, արտաժամյա, ժամանակավոր, գործավարձ), պետք է մտցնել նաև հաշվետու յեռամսյակի ընթացքում հերթական արձակուրդում գտնվողներին տրված գումարները, աշխատակիցներին ազատելու հետեվանքով տրված կոմպենսացիան, չօգտագործված արձակուրդի համար տրված գումարները և հաշվետու յեռամսյակի այլ վճարումները, բացի՝ գործուղման օրապահիկից և ճանապարհածախսերից, վորոնք չեն մտցվում 3-րդ սյունակում։

4. Չորրորդ սյունակում պետք է մտցնել հաշվետու յեռամսյակում կողմնակի անձանց (վորոնք չեն համարվում տվյալ գյուղխորհրդի աշխատողներ) տրված աշխատավարձի գումարը։

5. Աշխատավարձի ֆոնդի կազմի մեջ չպետք է մտցնել (հետեվապես և չեն հաշվվում հաշվետվության 3-րդ և 4-րդ սյունակներում) աշխատավարձի բոլոր տեսակի վերադրումները (սոցապ, տեղկոմի պահպանության և այլն)։

6. Հինգերորդ և վեցերորդ սյունակներում պետք է ցույց տալ համապատասխան վերադաս կազմակերպության կողմից տվյալ գյուղխորհրդի համար սահմանված աշխատողների թվի և աշխատավարձի ֆոնդի յեռամսյակային պլանը։

## 9-ՐԴ ԲԱԺԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ձեվ № 33.—«Ապահովագրական մուծումների հաշվարկային տեղեկագիր»։

Այս տեղեկագիրը պետք է կազմել յուրաքանչյուր ամիս։ Գյուղխորհրդները սոցիալական ապահովագրության հաշվարկում-



ներն ու մուծումները կատարում են յուրաքանչյուր պրոֆմիության համար առանձին (բժշկա-սանիտարական, դպրոցական, պետհիմնարկների, վարչական հիմնարկների և այլ աշխատողների միության),—ՀԱՄԿԽ-ի 1934 թ. փետրվարի 4-ի № 90 և ԽՍՀՄ ֆինժողկոմատի 1934 թ. փետրվարի 4-ի № 70 վորոշումներով սահմանված կարգով։

Գյուղխորհուրդներն ապահովագրական մուծումների հաշվարկումներն ու վճարումը կատարում են հաշվարկային տեղեկագրերով և գումարների փոխանցման մասին Պետբանկին արած կարգադրություններով։

Ձեվ № 33-ը պետք է լրացնել այս կերպ.—Յեթե առաջին սյունակով պարտք չկա, ապա 6-րդ սյունակում կլինի 4-րդ սյունակի գումարը հանած 5-րդ սյունակի գումարը, յեթե գյուղխորհրդի վրա պարտք կա, ապա պարտքն ավելացվում է չորրորդ սյունակի գումարին, իսկ յեթե պարտքը հաշվված է ապահովագրական դրամարկղի վրա, ապա նա հանված է չորրորդ սյունակի գումարից այս և այլ դեպքերում ստացվող թվից հանվում է այն թիվը, վորը ցույց է տրված հինգերրորդ սյունակում։

## 1-ԻՆ ՄԱՍ «ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ»

ա) վերնագրում պետք է ցույց տալ մուծումները վճարող գյուղխորհրդի մանրամասն անունը, հասցեն և վճարվող մուծումը.

բ) հաշվարկային տեկեկագրերը համարակալվում են հերթական №-ով՝ յուրաքանչյուր պրոֆմիության համար առանձին. տեղեկագրի մեջ պետք է անպայման ցույց տալ ապահովագրական մուծումները վճարելու և հաշվարկումները կատարելու ամիսը։

Հաշվարկային տեղեկագրի մեջ տեղեկությունները պետք է մտցնել աշխատավարձի վճարման տեղեկագրերից «(գյուղխորհրդների հաշվառում» Ձեվ № 31)։

գ) Առաջին սյունակում ցույց է տրվում գյուղխորհրդի, կամ ապահովագրական դրամարկղի վրա նախորդ ամսից մնացած պարտքը, ըստ վորում յեթե պարտքը մնացել է գյուղխորհրդի վրա՝ գծվում է «ապահովագրական գանձարկղի վրա» բառը և ընդհակառակը։

դ) 2-րդ սյունակում գրվում է տվյալ ամսվա 1-ին յեղած բանվոր-ծառայողների ընդհանուր թիվը, վորոնց համար հաշվարկված է ապահովագրական մուծումների գումարը տվյալ

պրոֆմիության գծով, հաշվելով մշտական, ժամանակավոր և համատեղության աշխատողներին։

յե) 3-րդ սյունյակում պետք է ցույց տալ՝ 1-ին սյունյակում նշված բոլոր անձնավորությունների համար հաշվարկված աշխատավարձի ընդհանուր գումարը, բոլոր տեսակի վճարումների գծով։

զ) 4-րդ սյունյակում պետք է նշել 3-րդ սյունյակում ցույց տված աշխատավարձի գումարից հաշվարկված սոցապ մուծումների գումարը՝ այսինքն, աշխատավարձի գումարի 10,25 տոկոսը (այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր մեկ ռուբլուց $10^1/_4$ կոպեկ)։

է) 5-րդ սյունյակում պետք է ցույց տալ ամսվա ընթացքում հատկացված գումարները (պրոֆմիությունների կողմից ձևակերպված փաստաթղթերով)—ժամանակավոր անաշխատունակության համար (հիվանդանոցային թերթիկներով), յերեխայի ծննդյան և սննդի լրացուցիչ նպաստների, թաղման (Զագսի քաղվածքը) և աշխատանքի հաշմանդամներին տված թոշակների (հաշվարկային թերթերի) գումարները դրանք վորպես ապահովագրական մուծումների հաշվին վճարվող գումարները—պահվում է մուծման յենթակա ապահովագրական վճարումների գումարներից։

ը) 6-րդ սյունյակում պետք է ցույց տալ այն գումարը, վորը պետք է փոխանցել համապատասխան պրոֆմիության կենտվարչության ապահովագրության գանձարկղի ընթացիկ հաշվին։

թ) Հաշվարկման տեղեկագրի վերջում ստորագրում են գյուղխորհրդի նախագահն ու հաշվետարը, կամ քարտուղարը և հաստատում կնիքով, նշանակելով նաև ամսաթիվը, նկատի ունենալով, վոր հաշվարկման տեղեկագիրը պետք է ներկայացնել հաջորդ ամսվա 5-ից վոչ ուշ,

## 2-ՐԴ ՄԱՍ «ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԲԱՆԿԻՆ»

ա) Վերնագրում կրկնվում է գյուղխորհրդի անունը.

բ) Ներքևի տողում պետք է ցույց տալ Պետբանկի, կամ խնայդրամարկղի շրջանային այն բաժանմունքի անունը, վորի միջոցով պետք է փոխանցել սոցապահովագրական մուծումների վճարման յենթակա գումարը։

գ) Կարգադրությունը պետք է համարակալել այն համարով, վորով համարակալված է հաշվարկային տեղեկագիրը։

դ) Կարգադրության մեջ պետք է ցույց տալ գյուղխորհրդի



հաշվի №-ը, վորից պետք է փոխանցել գումարը, նաև անպայման, այն պրոֆմիության սոցապահովագրության գանձարկղի անունը և պետբանկում ունեցած նրա ընթացիկ հաշվի №-ը, վորին պետք է փոխանցել սոցապ մուծումների գումարը,

յե) Փոխանցվելիք գումարը պետք է ցույց տալ թվանշաններով ռուբլիներով ու կոպեկներով. այս գումարի ռուբլիների քանակը պետք է գրել նաև տառերով։

զ) Կարգադրության վերջում պետք է լինի այն ստորագրություններն ու կնիքը, ինչ վոր հաշվարկային տեղեկագրի վրա յե.

Հաշվարկման տեղեկագիրն ու կարգադրությունը գյուղխորհուրդն ուղարկում է Պետբանկի, կամ խնայդրամարկղի շրջանային բաժանմունքին։

Հաշվարկման տեղեկագրի մյուս յերեսը՝ «Ծանուցագիրը» լրացնում է Պետբանկի, կամ խնայդրամարկղի շրջանային բաժանմունքը։

---

Ցուցակ գյուղխորհրդների գյուղատնտեսության վերաբերյալ
ներկայացվեն

(2-րդ բաժին) 1936 թ. հաշվետվությունների, որոնք պետք է
շրջհողբաժնին

| Ցանկի № | Հաշվետու հաղորդագրությունների բովանդակությունը | ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ | | | | ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբ. | Հոկտեմբ. | Նոյեմբեր | Դեկտեմբ. |
| 2 | Հաշվետվություն, գարնանացանի կամպանիային նախապատրաստվելու մասին . | 1,11,21 | 1,11,21 | 1,11,21 | 1,11,21 | մինչև գարնան ցանքի սկիզբը | | | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 |
| 3 | Հնգօրյա հաշվետվություն՝ գարնան աշխատանքների և գարնան ցանքի ընթացքի մասին . . . . , | Գարնան աշխատանք. սկզբից մինչև գարնան ցանքի վերջը | | | 5, 10, 15, 20, 25, 30 | 5,10,15 20, 25, 30 | 5, 10, 15 30, 20, 25 | — | — | — | — | — | — |
| 4-5 | Հաշվետվություն բերքի գրության մասին | Հաշվետվություն ներկայացնելու ժամկետները ցույց են տրվելու լրացուցիչ | | | | | | | | | | | |
| 6 | Տասնօրյա հաշվետվություն բերքահավաքի ինվենտարի վերանորոգման մասին . | Բերքահավաքի ինվենտարի վերանորոգման սկզբից | | | | 1,11,21 | 1, 11, 21 | մինչև բերքահավաքի սկիզբը | | | | | |
| 7 | Հնգօրյա հաշվետվություն՝ հերկի, քաղհանի, խոտհնձի և սիլոսացման ընթացքի մասին . . . . . | Հերկը կատարելու սկզբից | | | | 5,10,15 20, 25, 30 | 5, 10, 15 30, 20, 25 | 5, 10, 15 30, 20, 25 | նույն ժամկետներով մինչև խոտհնձի և սիլոսացման վերջանալը | | | | |
| 8 | Հնգօրյա հաշվետվություն՝ հացահատիկի բերքահավաքի, աշնան ցանքի և ցրտահերկի ընթացքի մասին . . . | Աշնանացանի բերքահավաքի սկզբից | | | | — | — | 5, 10, 15 20, 25, 30 | 5, 10, 15 20, 25, 30 | 5, 10, 15 20, 25, 30 | 5, 10, 15 20, 25, 30 | նույն ժամկետներին մինչև ցրտահերկի վերջը | |
| 9 | Միանվագ հաշվետվություն՝ կոլտնտեսություններում ցանովի խոտերի սերմարաններ առանձնացնելու մասին . . | — | — | — | — | Սերմարանները առանձնացնելու 2 օր հետո | | | | | | | |
| 10 | Կոլեկտիվացման ընթացքի մասին . | 4 | — | — | 4 | — | — | 4 | — | — | 4 | — | — |
| 11 | Տասնօրյա հաշվետվություն գյուղատնտեսական բույսերի և կենդանիների վնասատուների դեմ պայքարելու մասին . . | 1,11,21 | 1,11,21 | 1,11,21 | 1,11,21 | 1,11,21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 |
| 12 | Ամսական հաշվետվություն՝ կովպուրկ կոլտնտեսականներին օժանդակելու և բանող անասունների դրության մասին . | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| 13 | Տասնօրյա հաշվետվություն՝ բեղմնավորման կամպանիայի ընթացքի մասին . | — | — | — | 2,12,22 | 2,12,22 | 2, 12, 22 | 2, 12, 22 | 2, 12, 22 | 2, 12, 22 | 2, 12, 22 | 2, 12, 22 | 2, 12, 22 |
| 14 | Հաղորդագրություն՝ ավելացած և պակասած կենդանիների մասին, որոնք գրանցված են ՊՏՓ և ՇՏՓ մեջ . . . | 5 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |

Ցուցակ՝ գյուղխորհուրդների 1936 թ. լրացուցիչ հատուկ հաշվետվությունների, վորոնք պետք է ներկայացվեն շրջհողբաժնին

| Ցուցակի №№ | Հաշվետու հաղորդագրությունների բովանդակությունը | ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ | | | | ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբ. | Հոկտեմբ. | Նոյեմբեր | Դեկտեմբ. |
| 1 | Հաշվետվություն ձմեռային ու ձմեռա-գարնանային ջրումների ընթացքի մասին . . . . . | 2,12,22 | 2,12,22 | 2, 12, 22 | 5, 10, 15 | ձմեռային ջրումների սկզբից | | | | | | 2, 12, 22 | 2, 12, 22 |
| 2 | Հաշվետվություն վեգետացիոն ջրումների ընթացքի մասին . . | — | — | — | 20, 25, 30 | 5,10,15 20, 25. 30 | 5, 10, 15 20, 25, 30 | 5, 10, 15 20, 25, 30 | 5, 10, 15 20, 25, 30 | մինչև վեգետացիոն ջրումների վերջը | | | |
| 3 | Հաշվետվություն բամբակի նախացանքային մշակման ընթացքի մասին | Հերկի սկզբից | | 2, 7, 12 17, 22, 27 | 2, 7, 12 17, 22, 27 | մինչև հերկի վերջանալը | | | — | — | — | — | — |
| 4 | Հաշվետվություն՝ այգիներ խաղողանոցներ և հատապտուղներ տնկելու մասին . . . . . | — | — | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1,11,21 | 1, 11, 21 | — | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 |
| 5 | Հաշվետվություն՝ այգիների խաղողանոցների և հատապտուղների ամառային խնամքի մասին . . | — | — | — | — | 1,11,21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | 1, 11, 21 | — | — | — | . . |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—№ № 4 և 5 ձևերով հաշվետվությունը (լրացուցիչ հատուկ) տարածվում է միայն ապրանքային այգեգործություն, խաղողագործություն և հատապտուղներ ունեցող շրջանների վրա։ Այդ շրջանների ցուցակը հաստատվում է հանրապետական կառավարության կողմից։

# ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

## ԾՐԱԳԻՐԸ ԳՈՐԾԱԾԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԽՆԴՐՎՈՒՄ Է ՈՒՂՂԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՎՐԻՊԱԿՆԵՐՆ ՈՒ ՍԽԱԼՆԵՐԸ.—

| Էջ. | Տող | | Տպված է | Պետք է լինի |
|---|---|---|---|---|
| 3. | վերևից | 6 | Պայքարել | պայքարելու |
| 4. | » | 13 | պահանջել | պահանջելու |
| 5. | ներքևից | 16 | Հաշվետվության | Հաշվետվությունների |
| 7. | » | 12 | 15 | 16 |
| 7. | » | 8 | 16 | 15 |
| 9. | վերևից | 5 | (Նատուրայով) | Նատուրայով |
| 10. | » | 5 | Ձմեռ-գարնանային | Ձմեռա-գարնանային |
| 11. | ներքևից | 5-6 | կենտրոնական գործադիր կոմիտեյի քարտուղար | կենտրոնական գործադիր կոմիտ. քարտուղար |
| 12. | վերևից | 11 | ցույց տալիս | ցույց է տալիս |
| 14. | » | 10 | խորհրդակցական | խորհրդային |
| 14. | » | 13 | ԽՍՀՄ և ԺԿԽ-ի | ԽՍՀՄ ԺԿԽ-ի |
| 14. | ներքևից | 5 | յեռամսյակի | կիսամյակի |
| 16. | վերևից | 18 | գրված է | գրվում է |
| 18. | ներքևից | 19 | հաշվետվությանը գյուղխորհուրդը | հաշվետվությունների ըստացումը գյուղխորհուրդը |
| 21. | վերևից | 12 | պարտավոր է աշխատել | պետք է աշխատի |
| 21. | » | 18 | կարգավորել հաշվետվություն | կարգավորել հաշվետվությունը |
| 29. | ներքևից | 9 | ծնված | ծածկված |
| 31. | վերևից | 8 | անձ՝ իսկ իր կողմից | անձ՝ իր կողմից |
| 32. | ներքևից | 11-12 | լիակատար պատասխանատու | լիակատար կերպով պատասխանատու |
| 33. | վերևից | 10 | յերրորդում և ամբողջ | յերրորդում ամբողջ |
| 35. | » | 16 | ըթնացիկ | ընթացիկ |
| 37. | » | 11 | № 27 ա | № 27 բ |
| 41. | ներքևից | 9-10 | թերակատարման (ընաբերքով) և դրամական տուգանքները | թերակատարման բնաբերքով և դրամական տուգանքներով |
| 46 | ներքևից | 8 | ցուցանիշների, պետական | ցուցանիշների և պետական |
| 48. | վերևից | 4 | ցուցակներ | ցուցակներում |
| 49. | » | 16 | հանված է | հանվում է |
| 50. | » | 1-2 | համատեղություն | համատեղությամբ |
| 52-53 | ներքևից | 5 | տասնօրյա հաշվետվության բեղմնավորման կամպանիայի մասին (ժամկետները յուրաք. ամսվա 2. 12. 22) | Ամսական հաշվետվության բեղմնավորման կամպանիայի ընթացքի մասին (ժամկետները յուրաքանչյուր ամսվա 2-ին) |

30

ՀՀ Ազգային գրադարան
NL0404844

26 АПР 1936
337
11
28059